



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՐԻՍ ՎՄԱՆԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ

Ե ՏՈՐԻ

ՄԱՅԻՍ 1903

ԹԻՒ 5

ԲԱՐԵՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանունը բառ երկու նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Երբք կըրցուի մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաշտեանական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եւ մէջ հոգիին չմարգմաներ , չլուսաւորեր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտքին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՆԷ

ՍՐԵՒԵԼԵԱՆ ԴԻՇԵՐՕԹԻԿ ԿՐԹՍՏՈՒՆ

1020Ա. 20ԻԻՃԵՐԻԱ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Բ. տարեշրջանի գասախօսութիւնները կը սկսին սեպտ. 14ին :

Արեւելեան կամ Հայկական կրթատուներ կ'ընդունին 10էն 20 տարեկան աշակերտներ՝ որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու լուրջ կրթութիւն, ներդաշնակօրէն միացած ազգային հիմնական կրթութեան հետ : Հայ աշակերտներուն կ'աւանդուին, եւ այս՝ առանց ո եւ է մասնաւոր զճարումի, հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութիւն, եւն :

Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրաժանօթ դպրոցներէն : Ընտանեկան կեանք : Կրթատան տարեթոշակը, հակառակ ընծայուած բաղմաթիւ իրական առաւելութիւններուն, «անօրինակ» կերպով չափաւոր է : Կրթատան յայտագիրը ամէն ուզողի կ'զրկուի :

Էնօրէն, Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

1, Longeraie Doքթ. Ի գիտութիւնս, հա-
Lausanne, Suisse. մաշտարանական մասնաւոր
ուսուցիչ

ԱՌՈՂՋԱՊԱՅԻԿ ԹԵՐԹ

Բացուած է բաժանորդագրութիւն «Առողջապահիկ Թերթ» երկշաբաթեայ պատկերազարդ հանդէսի 1903-4 թուականի համար :

Իրրեւ յտեյուած, բաժանորդները կստանան ձրիապէս 4-ից մինչեւ 6 պատկերազարդ զըրքոյկներ : Բաժանորդաշինն է 2 ո. 50 կ, արտասահմանում 10 ֆրանկ :

Կարելի է վճարել եւ մաս-մաս. սկզբում՝ 1 ո. 50 կ. յունուարին 1 ո. : Հրատարալութիւնը սկսուելու է սեպտեմբերին Տարին սեպտեմբերից սեպտեմբեր է :

Աշխատակցելու են համարեա ընթերանուանի հայ բժիշկները թէ Ռուսաստանում եւ թէ Թերթիայում եւ Պարսկաստանում :

Բաժանորդագրութեան համար թէ Թիֆլիզի մէջ եւ թէ զաւտներից պէտք է դիմել Թերթիս խմբագրատունը կամ «Գուտաներբոգ» գրքավաճառանոցում :

Մեր հասցէն Tiflis, Rédaction «Aroghdjarahik Tert».

Խմբագիր-հրատարակիչ՝
ԲԺ. ՎՍՋԱՆ ԱՐՇՐՈՒՆԻ



1080 ՏԵՍԱԻ

BIBLIOTHÈQUE ARMÉNIENNE. N. 1

CHANTS POPULAIRES

ARMÉNIENS

TRADUCTION FRANÇAISE AVEC UNE INTRODUCTION

PAR ARCHAG TCHOBANIAN

PRÉFACE

PAR PAUL ADAM

LIBRAIRIE PAUL OLLENDORFF, PARIS, RUE DE LA CHAUSSÉE D'ANTIN, 50

Գրել ուզողները պէտք է գիմին ՕԼԵՆՏՈՐՑ գրավաճառանոցին
Գին 3 Ֆր. 50

ԱՆԱԿԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

ԱԶԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Ե. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1903

ԹԻԻ 5

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԷՆԻ

Արդի հայերէնի վրայ «Անահիտ»ի մէջ հըրատարակած ուսումնասիրութիւնս վիճարանութեանց ծնունդ չտուաւ, ինչպէս պ. Մեյիէ կը յուսար: Բաց ի «Մուրճ»էն, որ այդ յօդուածին կարգ մը երկրորդական կէտերուն վրայ խճճանքի մէկ քանի տողեր հրատարակեց, ոչ մէկ հայ պարբերական չգրադեցաւ այն լեզուական հարցերով զոր յարուցած էի: Էական դերանուններուն մէջ իրական սեռի մը հաստատման առաջարկս իսկ չկրցաւ յաղթել այդ համասփիւռ անտարբերութեան: Անշուշտ՝ լեզուի հարցը, այս պահուս ուր շատ աւելի կարեւոր ու հրատապ խնդիրներու լուծմամբը մտքերնիս զբաղած է, երկրորդական տեղ մը կը բռնէ մեր մտահոգութեանց մէջ, բայց՝ վերջապէս աւելի շահեկան է քան կարգ մը թաղականի խնդիրներ կամ այն անճնական ճղճիմ վէճերը որոնց այնքան լայն տեղ մը կը տրուի մեր արտասահմանի մամուլին մէջ. ատկից զատ, լեզուի հարցը, եթէ այս վայրկեանիս առաջնակարգ շահեկանութիւն չունի, հետո է սակայն անկարեւոր հարց մ'ըլլալէ:

որովհետեւ նոյն իսկ «ազգային» տեսակէտով, ոչինչ աւելի արժէք ունի մեզի համար քան մեր լեզուն, մեր ցեղային ինքնութիւնը մարդկութեան մէջ մշտնջենաւորող մեծագոյն սատարը, եւ որուն ոգւոյն անվթար պահպանմանն ու կազմածքին տրամաբանական եւ ուշիմ զարգացմանը նպաստելու ո եւ է ջանք «ազգային դործ»ին համար աշխատելու կը համապատասխանէ նորէն:

«Անահիտ»ը պիտի շարունակէ ուրեմն, այդ հարցին վրայ մերթ ընդ մերթ ուշադրութիւն հրաւիրել:

Իրականի յաւելումը, եթէ տակաւին ընդգրկող չգտաւ մեր մէջ՝ բաց ի զայն առաջարկողէն, հակառակող ալ չգտաւ: Համոզուած ըլլալով՝ որ այդ նորամուծութիւնը էական պակաս մը լրացնելու կը ձգտի, եւ անտարակոյս եւ որ ուշ կամ կանուխ ան պիտի ընդունուի մեր գրագէտներէն, եւ յետոյ՝ անոնց ազդեցութեան տակ՝ խօսակցութեան սովորական լեզուին մէջ պիտի անցնի, գլխաւորապէս թատրոնի եւ մամուլի միջոցով, — որոնք արդէն այնքան նորութիւններ ընդունելի դարձուցած եւ ընտանեցուցած են:

Այսօր, ուրիշ նորութիւն մը կ'ուզեմ առաջարկել՝ մասնաւորապէս մեր արեւմտեան գը-

բազմաներուն, — այն է սուսահայոց ներգոյա-
կան «ուսմ»ին գործածութիւնը մեր աշխարհա-
բարին մէջ : Այդ առաջարկութիւնը մտադիր
էի ներկայացնել արդի հայերէնի վրայ հրա-
տարակամ ուսումնասիրութեանս մէջ, բայց պ.
Մեյնէ, որուն ցոյց տուի յօդուածս՝ հրատա-
րակելէ առաջ, ինծի խորհուրդ տուա ջնջել
այդ առաջարկութիւնը (ինչպէս եւ իդա-
կան»ինը) առարկելով թէ լեզուական օրէնք-
ներու հակառակ էր քերականական նոր ձե-
ւեր արուեստականօրէն մոցնել լեզուի մը մէջ .
բայց զայդ ըսելով, ինքն իսկ կը խոստովանէր
թէ՛ լեզուական օրէնքներու հակառակ՝ նորու-
թիւններ մտցուած են կարգ մը լեզուներու
(ինչպէս ֆրանսերէնին) մէջ եւ ընդունուած,
մնացած են, եւ թէ այսպիսի խնդիրներու
մէջ խոհեմութիւն չէր լեզուաբաններու դի-
մել, որոնք լեզուն չինող ու կազմողներ չեն,
այլ լեզուն կազմութեան օրէնքները քննող-
ներ : Յարգելի հայազէտին զիտողութիւնը
չկրցաւ զիս արգիլել իգականի մասին առա-
ջարկութիւնս պահպանելէ, բայց յաջողեցաւ
«ուսմ»ին մեր մէջ ընդհանրացման կարելիու-
թեան վրայ հաւատքս խախտել, եւ այդ ա-
ռաջարկութիւնը ջնջեցի : Այժմ, կը խորհիմ
որ լաւագոյն բան մ'ըրած պիտի ըլլայի պ.
Մեյնէի երկրորդ խորհուրդը նախընտրելով, ո-
րովհետեւ «ուսմ»ին պէտքը անվիճելի ու ան-
շքրածեշտ կը թուի ինծի : Պէտք է գիտել որ
արեւմտեան աշխարհաբարին մէջ ոմանք
արդէն սկսած են գործածել «ուսմ»ը . 9-10 տարի
առաջ Արմաշի դպրեմանքին հրատարակող
«Մասիս» կրօնաթերթը զայն յաճախ կը գոր-
ծածէր . բայց այդ գործածութիւնը չընդհան-
րացաւ, որովհետեւ անոր անհրաժեշտութիւնը
ոչ ոք բացատրեց պայծառօրէն, ու գործա-
ծողներն ալ թոյլ ու վարանոտ կերպով զայն
գործածեցին ու յարատեւութիւն ցոյց չտուին :

Մեր արեւմտեան աշխարհաբարը ողողուած
է «մէջ»ով, որ ներդաշնակ ալ բառ մը չէ՝ եր
սուր «ջ»ովը երբ մասնաւանդ յաճախ կը
կրկնուի : Այդ խեղճ մէկհատիկ «մէջ»ը ֆրան-
սականն ան : dansին, եւ enին միանգամայն
ստիպուած է համապատասխանել . յաճախ մի-
եւնոյն ֆրազին մէջ երկու, երբեմն երեք ան-

գամ կը կրկնուի այդ ցաւալի «մէջ»ը : Իսկ
ուրիշ պարագաներու մէջ ալ՝ երբ «մէջ» չենք
գործածեր, անոր տեղը կը բռնէ անորոշ, վայ-
րենի ձեւ մը՝ առանց ո եւ է նախադրութեան
կամ վերջադրութեան (զինքը Փարիզ տեսայ,
այն ժամանակները այդ զէպքը պատահեցաւ,)
մինչ Ռուսահայը կ'ըսէ՝ «Նրան Պարիզում տե-
սայ, այն ժամանակներում այդ զէպքը պա-
տահեցաւ : »

Այս անպատեհութիւններէն մեր աշխարհա-
բարը բուժելու համար, պէտք է ընդունինք
նախին գործածութիւնը : Հարկ չկայ որ զայն
գործածենք այնքան յաճախ որքան սուսահայը
սովոր են . մենք կրնանք մեր հինաւուրց մեջին
տալով հանդերձ գերակշիռ դերը, ունը գործա-
ծել որոշ պարագաներու մէջ, երբ ներդաշնա-
կութեան կամ յստակութեան տեսակէտով ան-
հրաժեշտ կը դառնայ անոր կիրարկումը : Մեր
արեւմտեան աշխարհաբարն արդէն ունի այն-
պիսի մասնայատկութիւններ որ ունին մըշ-
տական գործածութիւնն անհնար կը դարձը-
նեն . այսպէս, մըշտ ընկերացող բառերը «ուսմ»
չեն կրնար ստնել, կարելի չէ ըսել «քաղա-
քում մը», մինչ Ռուսահայը կ'ըսեն «մի քա-
ղաքում» . բայց կան պարագաներ ուր «ուսմ»ին
գործածութիւնը բարեբան է, եւ կրնայ կատա-
րուիլ առանց ո եւ է անպատեհութեան : Ունը
օտար լեզուէ մը փոխ առնուած մասնիկ մը
չէ, Հայոց կէսը զայն՝ կը գործածէ, հայերէն
լեզուն մէկ կարեւոր հատուածին բնիկ տար-
բերէն մէկն է, եւ առանց խորթութիւն բերելու
կրնայ արեւմտեան աշխարհաբարին մէջ մըտ-
նել . — քանի որ նոյն իսկ տաճկերէնէ այն-
քան մասնիկներ, (օրինակի համար՝ կ'երթամ
կիւր, կիտիյօւրմ, եւն), ձեւեր, բառեր մտած են
մեր աշխարհաբարին մէջ :


Ուրիշ հարց մըն ալ՝ նկատի առնելու, այդ
կորին հարցն է : Տաճկերէնէ մտած ըլլալուն,
կամ գոեհիկ?) թուելուն համար, մեր գրողներէն
չատերը կը խուսափին մինչեւ ցարդ «կոր»ը
գործածելէ . ասի պարզապէս մեր արեւմտեան
աշխարհաբարին օրէնքներուն դէմ մեղանչել է.
«կոր»ը մեր արդի լեզուն մէջ մտած, ար-
մատացած, որոշ տեղ եւ պաշտօն ունի . առանց

«կոր»ի սահմանական ներկան շատ յաճախ ապառնիի իմաստ կ'առնէ մեր մէջ, (Ռուսահայոց մէջ միշտ) . «կ'երթամ, կ'ըսեմ» կը նշանակեն «պիտի երթամ, «պիտի ըսեմ» . Արդ, սահմանական ներկան ու անկատարը ապառնիէն որոշելու համար ուսահայք ունին՝ «ասում եմ», «ասում էի» ձևը, մենք ունինք «կ'ըսեմ կոր», «կ'ըսէի կոր» ձևը . մեր ամենէն նուրբ գրողն իսկ, խօսած ատեն «կոր»ը միշտ կը գործածէ . ի՞նչու գրական լեզուին մէջ չպահել ինչ որ խօսուած լեզուին մէջ անհրաժեշտ տարր մըն է եւ իբրև այդ կը մնայ միշտ : Ըսել չեմ ուզեր որ սահմանական ներկան եւ անկատարը միշտ «կոր»ով ընկերանան . պէտք է գրական լեզուին մէջ գործածել «կոր»ը այն պարագային միայն ուր կը գործածուի խօսուած լեզուին մէջ, այսինքն երբ բայը անմիջական գործողութիւն մը ցոյց կուտայ :

Օտար բառերու արդի հայերէնին մէջ կիրարկութեան մասին նախորդ յօդուածիս մէջ մտածումս յայտնած եմ յստակօրէն . բնաւ հակառակ չեմ օտար բառերու գործածութեան, երբ անոնք ու եւ արդէն գտնուող կամ դարբնուող հայերէն բառ մը չունին իրենց համապատասխան : Բայց աններելի է օտար բառեր գործածել երբ անոնց հայերէնը ունի լեզուին քայքայել, այլանդակել է ատի, Ռուսահայք, որ այդ հարցին ուշադրութիւն դարձուցած եւ իրենց երբեմնի օտարամոլութիւնը մեծապէս մեղմացուցած են, դեռ սակայն բոլորովին չեն բուժուած այդ ախտէն . նոյն իսկ մերթ խաւար կը վերաբորբոքուի կոր՝ անոնցմէ ոմանց մէջ՝ խոտովի համեմատութիւններով . «Մուրմի վերջին թիւը կը պարունակէ Աղեքսանդր Ռուբինի անուն անձի մը կողմէ յօդուած մը Պետրոս Բուրեանի մասին, որուն մէջ կը գտնեմ հետեւեալ բառերը . «մուզա, օազիս» (փոխանակ «մուսայ, ուլասիս» հայացած ձեւերուն զոր ունինք դարերէ ի վեր), «էմօցիա, ներվային» («ջլային» կամ «ջլոտ» ըսել կ'ուզէ), «կրիտիկական էտիզ, լիբիկական, լիբիզմ, կոլորիտ (coloris), սուբիեկտիւ, պօէզիա, օրգանիզմ, մեղանխօլիա, տէկստ, սոցիալական, ֆիլիօսօփա, պեսսիմիստ, էրօտիկական, էլէզիա,

Փանտազիա, օպտիմիստ, տէմպերամէնտ, օրիկետիւ, օրի.ինալ, մաներ» (uanière), եւ սահմանադրաբար բայը՝ «ոճը պրօգնիսանում է» () : Հայ գրական լուրջ օրկան մը ի՞նչպէս թոյլ կրնայ տալ որ իր աշխատակիցներն այսքան բարբարոս վարմունք մ'ունենան մեր մայրենի լեզուին նկատմամբ : Հակառակ «Լէտ»ին, որ «Մուրմ»ի նոյն թիւին մէջ կը ջանայ Բաֆֆիին իրաւունք տալ հայ ազգը «բողի» նմանցուցած ըլլալուն համար՝ առարկելով թէ այդ կծու բաղդատութիւնն ըրած է մեր ցեղն իր թերութիւններէն բժշկելու համար, ես միշտ կը մտածեմ թէ աններելի է «թեթեւամիտ ու վաւաչոտ» պոռնիկի (ինչպէս Բաֆֆի կը գրէ «Դաւիթ Բէկ»ի մէջ), այսինքն իր ձեռքովը, անբարոյականօրէն, վատօրէն օտարին գերկը նետուող անձի՝ նմանցնել հայ ազգը . այդ ազգը շատ խոշոր թերութիւններ ունեցած է եւ ունի, իր տունը շատ անգամ իր ձեռքովը կործանած է եղբայրասպան նախանձի, երկպառակութեան, անկարգապահութեան պատճառով, բայց, հեռու սիրայօժար օտարին գիրկը նետուելէ, Ասորեստանցիին, Պարսիկին, Հռոմայեցիին, Թաթարին դէմ դարերով մաքառած է ան՝ իր ազգային հողին ու գրոշմը անվթար պահպանելու համար, եւ այսօր իսկ Տաճկին դէմ կը մղէ անհաւասար, անհամեմատական, բոլորովին «ոմանթիկ» պայքար մը, զոր բողբոջ սովոր չեն մղելու : Այո՛, ես միշտ կը մտածեմ թէ մեր թերութիւնները միշտ պէտք է երեւան հանենք եւ անողորմաբար խարանենք, առանց սակայն ծայրայեղ ու անճիշդ դատապարտութեան մը տակ ջախջախելու այս ժողովուրդը, որուն կրտսէ ամենամանր անիրաւութիւնները արդէն իսկ շատ չափազանց շատ են : Բայց երբ մեր լեզուին մէջ, որ ազգային ինքնութեան գերագոյն սրբազային է, այդքան արհամարհոտ անհոգութեամբ կը մտցնենք օտարին բառերը՝ առանց անոնց պէտք ունենալու, այդ պարագային իրօք բողբոջուցած կ'ըլլանք մեր լեզուն, եւ մեր ազգն ալ :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



Է Օ Մ Է Ր Խ Ա Յ Ե Մ Ի Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր Ը

Ծ

Անոնք որ մտքի եւ քննութեան գերիներն են,
 Գոյութեան ու չգոյութեան անձկանքին մէջ կորնչեցան .
 Գնա՛ դու . ո՛վ անգէտ , եւ խաղողին ջուրն ընտրէ՛ ,
 Զի անգէտները աղօթներ են չոր չամիչներուն (քով) :

ԾԱ

Իմ գալէս օգուտ չեղաւ երկնքին
 Եւ մեկնելէս չպիտի աճի անոր գեղն ու շուքը :
 Եւ ոչ մէկէն սա երկու ականջներս լսեցին
 Թէ իմ գալս ու մեկնիլս ի՛նչ բանի համար եղաւ :

ԾԲ

Սիրոյ ճանապարհին մէջ պէտք է մաքրուինք,
 Ճակատագրի ճանկին մէջ պէտք է խորտակուինք .
 Ո՛վ քաղցրագէմ Սաքի , դու ծոյլ մի՛ նստիր .
 Գիւնի տուր , զի հող պէտք է դառնանք :

ԾԳ

Հիմա որ երջանկութենէ լոկ անուն կը մնայ ,
 Տհաս գինիէ գատ մէկ հասուն բարեկամ չի մնար .
 Գիւնի գաւաթէն ետ մի՛ քաշեր բերկրալից ձեռքդ,
 Այսօր որ բաժակէ գատ ձեռքդ բան չի մնար :

ԾԴ

Գրիչին դժածը երբեք ուրիշ գոյն չի փոխուիր,
 Եւ հոգերով մորմոքելէ միայն սիրտ կ'արիւնի ,
 Եթէ բոլոր կեանքիդ մէջ արիւն խմցնէ քեզ բազդդ,
 Կաթիլ մը աւելի չըլլար քան այն որ սահմանուած է :

ԾԵ

Ո՛վ սիրտ՝ մի՛ փնտռեր ախտացեալներու ընկերութիւնը,
 Մի՛ պարապիր աստուածարեալներու հրայրքին .
 Տէրվիչներու սեմերը յաճախէ՛ ,
 Գուցէ ընդունելի դառնաս (Սատուծոյ) ընդունականներուն :

ԾԶ

Անոնք որ երկինքը կը զարդարեն ժամանակի մասնիկ մը .
կուգան ու կ'երթան եւ վերստին ժամանակին կուգան .
երկինքին քղանցքին մէջ եւ Դեռնին զրպանին մէջ
Արարածներ կան որ մինչեւ Աստուած չմեռնի՝ պիտի չճնին :

ԾԷ

Անոնք որ հաւատքի հիմունքը ստուծեան վրայ կը դնեն ,
կուգան եւ հոգիի ու մարմնի մէջ խտիր կը դնեն .
Գլխու վրայ զինիւ փարչ կը դնեմ այտուհետեւ ,
Եթէ՛ իբր թէ աքաղաղ ըլլայի՝ սանար գլուխս դնեն :

ԾԸ

Մարմինները որ կը բնակին այս երկնքի կամարը ,
իմաստուններուն տարակուսանքի պատճառներն են .
Ձգոյ՛ ճիւղ որ իմաստութեան թելին ծայրը ձեռքդ քնայ ,
Զի կառավարողներուն անգամ գլուխը կը դառնայ :

ԾԹ

Ես այն մարդը չեմ որ ոչնչացումէս ինձ վախ բերեմ ,
Զի այդ կէտը ինծի աւելի անուշ կուգայ քան այս կէտը ,
Հոգի մըն է զոր ինձ Աստուած փոխ տուած է ,
Կը յանձնեմ երբ յանձնելու ժամը գայ :

Կ

Այս կեանքի կարաւանը խորհրդաւոր կ'անցնի կ'երթայ .
Բռնէ՛ այն վայրկեանը որ բերկրանքով կ'անցնի .
Սա՛ քի, ընկերներուդ վաղորդայնին հոգովը ինչո՞ւ կը տանջուիս .
Գինի բաժակը աո՛ւր զի գիշերը ահա կ'անցնի կ'երթայ :

ԷՍՄԷՐ ԽԱՅԵԱՄ

Թարգմ. պարսկ .
Գ. ՓԱՌՆԱԿ

1820 1821

Ստորեւ կը հրատարակենք հայերէն թարգմանութիւնն այն յառաջաբանին զոր փոլ Ատան գրեց Chants populaires arméniens հատորին համար :

Այնպէս կը թուի որ ընկերաբանական օրէնքներուն ձգտումը փոքր հայրենիքները կը դատապարտէ իրենք իրենց մէջ յամբուելու՝ որպէս զի մեծ աէրքք իւննէր կաղմին, ինչպէս Գերովանիան 1870ին, կամ հզօր աղգերու մէջ սուգու ելու՝ ինչպէս, վերջերս, Թրանսվալը, Հայրենիքները կը գումարուին, ինչպէս այն շրջանին երբ հոռմէական ահապին պետութիւնը կազմուեցաւ : Լատինական գործը քայքայուեցաւ բարբարոսներէ արշաւանքներէն, որոնք լեզուներու յազաբակըրթիչ աշխարհակալութեան տեղ աւատական, քանդիչ, բռնաւորական ու սգէս աշխարհակալութիւնը գրին : Մոնկոլեան աշխարհէն մեկնած, Հիւսիսի ողողմունքներէն ու սառոյցքներէն հալածուած, վայրենի մողովորդներուն կոհակները արեւելեան հիւսիսէն գէպի արեւմտեան հարաւ կը խուճէին՝ բովանդակ հին աշխարհին վրայ, կ'ողողէին ձիթի հիւսաւտոսական նահանգները, գաղթականութիւնները, դաշնակիցներու երկիրները, եւ նոյն իսկ Քաղաքին հողը, հազար տարիի չափ եւրոպայի վրայ Միջին Դարու մութ քօղը նետելու համար : Թուրքերը հասան, վերջին քանդիչներուն ետեւէն : Գերմաններուն, Ֆիններուն ու Քալմուքներուն պէս, անոնք ալ իրենց յաղթական ու կողոպտիչ զերիշխանութիւնը տիրական դարձուցին, պարտուած երկիրներուն մէջ տեղաւորուեցան, զանոնք ստրկացուցին : Կիներն իրենց անկողինը մրտցուցին, այրերը արհեստաւորի գործիքներուն վրայ կը բեցուցին, կամ հերիոնելէ, հողին վրայ քրտընող երկրագործին խոնարհ ճիզը խթեցին :

ԺԳ. դարէն ի վեր, յոյն-լատին գաղափարներու վերածնութիւնը յամբար կը հարկէ այս յափշտակողին : Ետեւ քրիստոնէութիւնը, յետոյ բողոքականութիւնը, Անգլիոյ եւ Ֆրանսայի յեղափոխութիւնները որոնց հետեւեցան 1820էն 1850՝ բոլոր արիական ժողովուրդները, աւատապետին կամայականութեան զէմ Վարդկային աղատութիւնը պաշտպանող Օրէնքին վարկը վերահաստատեցին : Այսօր, Ռուսիան իսկ հիւսիսային Չինաստանը, Պարսկաս-

տանը, կեղրոնական Ասիան կ'իւրացնէ՝ պատերազմական միջոցներ քիչ գործածելով : Տնտեսական երկաթուղիներու ստեղծումը, իր պանքաներուն կողմէ Իրանի վեհապետներուն բացուած վարկը, դեռ աղքատ վիճակի մէջ մնացած վայրերու հարստացումն իրենց նպատակ ունեցող վաճառականական ձեռնարկներու ծրագրումը, գործնական գիտութիւնէն ցարկ զուրկ եզոզ գաւառներու ծոցին մէջ ճարտարագործութեանց հաստատումը՝ ահա ստեղք են նոր աշխարհակալութեան, նոր իւրացման ձեւերը : Անգլիա եղիպտոսն իրեն կը կցէ՝ Ենդոսի-վրայ-Աստանի փակոցներով զայն արդաստաւորելով, որու շնորհիւ պիտի ստանայ բամպակի մշակութիւնն ու տարեկան վաթսուտեհինդ միլիոն շահ, Սուտանէն կարմիր ծով զացող երկաթուղիով, որ կապուած Ենդոսին ու Հնդկաստանի հարստութեանց արագ փոխանցման միջոց պիտի դիւրացնէ : Ֆրանսա թոնքինը կ'արեւմտեան արեւմտեան մեթոսիներով կը գծէ տեղեկիծէ չայն ճեպընթացներուն որոնք Եւրոպայի արեւմտեան կարմիր դետին հետ ու չինական արեւմտեան-հիւսիսային նահանգներուն թոյլ պիտի տան հիւսալի վաճառականութիւն մ'ունենալ :

Տիրող պետութիւններէն միայն Թուրքիան է որ կը յամարի իր հպատակները անգթօրէն, անխելքօրէն կեղեքել, կըրդպտել չահագործել : Հայն ու Ռակեղոնացին Քիւրտին ետթաղանին կամ Չափթիէին թուրքն տակ կ'արիւնին : Բարբարոսութեան ոճերը սիրելի կը մնայ երլարդ-Իէօչկի Սուլթաններուն : Հայրենիքները զոր ատենով գումարեցին՝ գէշքի զօրութեամբ շուպրութեան ընկերական անկենդանութիւնը վիճակի մը բերած հասուցած են : Քաղաքներուն տեղ, ամսուրեք, աւերակիցի կ'էրեւան :

Հայ գրականութեանց այս հաւաքածոյին սկիզբը զրած իր թանկագին ներածութեանը մէջ, պ. Արշակ Զօրանեան կատարելապէս չափած է իր ցեղին կենսական զօրութիւնը եւ հրաշալի կերպով ապացուցած է թէ Պատմութեան բոլոր դարերուն մէջ ան եղաւ արտադրութեան մեծ ուժը Արեւելքում : Կործա-

նումի ուժերէն պաշարուած, տարապեցած գրեթէ անդադար, Սակայն, հակառակ բոլոր լուծերուն որոնց երթարկուեցաւ, արտադրելու այդ բարեբաստիկ կտրողութիւնը պահպանեց: Բոլոր զինուորներէն պարտուած, կրցաւ յաւիտենապէս զանոնք ապշեցնել իր վաճառականական հանճարովը: Իր կրկրարործութեան բեղմնաբերութեամբ, իր անհամար արհեստաւորներուն ճաշակովը, Բիւզանդական շրջանին, հայ վաճառականները կ'Պոլսոյ մէջ վաճառականական ու վարչական գերիշխանութիւնն իրենց ձեռքի անցուցած էին: Հայկական լէգէոնները Բիւթանիոյ մէջ կայսրութեան սահմանադրելիս կը պաշտպանէին Սարակիստաններուն դէմ: Իսաւրեաններու Հարստութիւնը, որ իշխեց այդ արեւնէն կը սերէր: Այսօր Ռուսիոյ Հայերն են որ Պարսկաստան կը հասպտաղէին՝ եւրոպական մեթոքներու ազդեցութիւնը հոն զարգացնելու հպարտ: Ամէն բան խլած են իրենցմէ, բայց ի մարդկային կեանքին համար օգտաւէտ եղող բաներ արտադրելու, միջազգային յարաբերութիւնները քաղմապատկեւէք, խաղաղական արուեստները տարազնելու հաջնարէն:

Յեղ մը այսքան տոկուն՝ հակառակ այնքան աղէտքներու եւ ջարդերու հակառակ այն երկայն մարտիրոսագրութեան զոր կը ներկայացնէ Պարթեւէն, Պարսիկէն, Հռովմայեցիէն, Յոյնէն, Արաբէն ու Թուրքէն արիւնոտած իր պատմութիւնը, ցեղ մը զոր ոչ մէկ ուժ չկարողացաւ ձուլել, այսպիսի ցեղ մը կրնայ յուսալ իրերու յեղաշրջում մը, որ տակնուվրայ ընելով արդի անսահման պետութիւնները, օր մը փոքր հայրենիքներուն պիտի դարձնէ գերակշռութիւնը զոր կը բազման անոնց քաղքենիները: Չէ՞ որ հոռոմէական ահադին կազմաձեւը քայքայուեցաւ, եւ Բաղաքին հոգր վերստին հատրածաւորուեցաւ ու կազմեց Գալիաները, Ալպտրիաները, Ալքաթանիաները, Սպանիաները, Թուրքանաները, Պնտապոլիսները, Սիկիլիաները, Եգիպտոսները, Ասորիքները ու դեռ հազար ինքնավար հանրապետութիւններ:

Սպանելով նմանօրինակ դիպուածի մը, Հայերը կ'ուզեն երկիւղածօրէն պահպանել իրենց հոգւոյն ինքնութիւնը, որպէս զի յաղթանակէ

ան, ամէն օտար խառնուրդէ զերծ ու մաքուր, ազատաբուծի վայրկեանին: Ահա ասոր համար է որ հայ ցեղին լաւագոյն քաղքենիներէն մին, միջ անոր այն զաւակներէն որ ամենէն աւելի օժտուած են զայն պաշտպանելու եւ սիրելի դարձնելու, անոր ի նպաստ համակրութիւն, հիացում եւ գորով արթնցնելու համար, Ֆրանսայի մէջ կը ղետեղէ առաջին քարը յիշատակարանի մը զոր որոշած է կանգնել մաքառող, տառապող ու միշտ անյագօրէն յուսացող Հայութեան մաքին ի պատիւ:

Փողովրդական երգերն են ասոնք, անանուն յանկերգներ, միամիտ հրճո անքի, պարզ ցաւի, արդար կարողութեան այլազան աղաղակներն եւ ճիշտը զոր կ'արձակեն ղեռասի սիրահարները, հարսնիքի թափօրները, մահուան անկողինն առջեւ արտասուող մայրերն ու ամուսինները, կեղեքիշին դէմ կոռուելու խիզախող ու զայն վանած ըլլալէն արբշիւ մարտիկները: ամբողջ միտն է ժողովրդին որ կը դուրս հոս՝ էջէ էջ, տունէ տուն: Խելացնոր ողբերն են էնոնց զօր խեղճ պանդուխտը լքեց՝ խաղաղական կլիմայի մը տակ իր եղկելի կեանքին ապրուստի միջոց մը ճարելու համար: Կայ հոտ նաեւ բոմանքը հանապազօրեայ զուարթութեան, իր աղւոր ու սիրահարներով պաշարուած աղջիկը զարգարող մօր հպարտութիւնը, ու բերկրութիւնը գեղջուկին որ իր եղերով լծուած արօրին ետեւէն կ'երթայ՝ օղին զովութեանը մէջ՝ առաւօտեան աշխատանքը կատարելու: Կեանքի բոլոր երեսները կը ցնծան կամ կը կողկողին: Մեծ բնութիւնը կը բաբախէ այդ այլազան երգիչներուն դէմքերուն ետեւը:

Սիրային երգերուն յատկանիշն է կնոջ շաւունակական բաղդատութիւնը տիեզերքին հետ: Կարծես թէ հրապուրողն իր աղւորին իւրաքանչիւր շնորհին մէջ կը ջանայ վերագտնել պարտէզին, երկնքին, լերան մէկ շքեղութիւնը: աղջիկը՝ բեղմնատուր ու բարերար աշխարհին մէկ մեհենաղբոյն է դարձած, Երբ տարփածուն կ'անուանէ ընծաները զոր կ'առաջարկէ, երկրադնդին ու երկնքին բոլոր դանձերն է որ կը թուէ: Իր պաշտուածի տենչը աւելի բնութեան կ'ուղղուի քան նոյն ինքն

«եարձին» Գէթ, հեշտական մարմնաձեւերուն մէջէն, կը նշմարէ, որպէս թէ անոնք թափանցիկ ըլլային, իր մեկամաղձիկ լիճերով, մեծ վէտովէտուն լեռնաշղթաներով, աստղավառ գիշերներով հայրենիքին բովանդակ պատկերացումը. աւելի իր ծննդավայր երկիրն է որ գրկել կը ցանկայ, քան այն տրոփուն մարմինը որուն մէջ իր երեւակայութեան զօրութեամբը զայն կը փոխադրէ:

Ոչինչ կայ աւելի տարօրինակ, աւելի մասնայատուկ. մեր արեւմտեան սրտերը այլապէս դրական են: Անձը զանոնք նաեւ կը հրապուրէ քան իրենց ընդհանուր գաղափարները: Երկուութիւն կայ իրենց մտաւոր յղացումներուն ու իրենց ցանկութեան իգական առարկային միջեւ: Ընդհակառակն, կը թուի թէ Հաստատանցի տարփաւորը, իր սիրոյն բոլոր արտաբայութիւններուն մէջ, «կ'ուզէ Գանթի փիլիսոփայութիւնը արդարացնել»: Ետը ուրիշ բան չէ բայց եթէ ման մը տիեզերքէն՝ այնպէս ինչպէս իր ուղեղը զայն կ'ըմբռնէ, եւ զէնի զիւրաւ չի գտեր անկից: Հայրենի հողին համար ի'նչ չքնաղ տարփանք մըն է որ այդ բանաստեղծութեան մէջ կը թարգմանուի, ի'նչ չքնաղ պատկառանք այն գաղափարներուն համար զոր կլիման կը ծնի, զոր բլուրներու կորութիւնները կը թելադրեն, զոր սարերու ձիւները կը լուսաւորէ, զոր հեղեղին զընացքը կը մրմնջէ, զոր ծորձորին շունչը կը ներշնչէ:

Սովորաբար, մտածելու այսպիսի եղանակ մը զարգացեալ դասերուն միայն կը վերագրուի: Կը հաւատեն թէ ատի արդիւնքն է բնագանցական խորհրդածութիւններու որոնք գիտութիւններով ու մեթոտներով շատ հնուց ի վեր նրբացած ցեղերուն յատուկ են: Հայկական երգերը այս թէզը կը հերքեն, անանուն հովիւր, պառաւը, երկրագործը առաջին հարուածով տաղաչափած են այդ տեսութիւնը զոր Մեմփիսի եւ Եփեսոսի մեհեաններուն մէջ ուսած Հելլենները Աստղիկ Ուրանիայի գերադաս պաշտամունքովը խորհրդանշանացին:

Հաստատապէս կը հաւատամ թէ այս ժողովրդական երգերուն ծանօթանալով, ֆրանսացի ընթերցողը աւելի կատարեալ կերպով պիտի

ըմբռնէ արեւելեան հողին, համաստուպիութիւնը այդ հինաուրց ժողովուրդներուն որոնք ա' յնքան հայր են եղած մեր բարձրագոյն մտայնութիւններուն:

Անոնց մէջ պիտի վերագտնենք այն քնար, երգական ձեւերը որոնց միջոցով, թերեւս, Հայերը բիւզանդական գեղեցկագիտութիւնը արար ուղեգններուն մէջ ներմուծեցին: Տարօրինակ ու ակնյայտնի փոխանցում. այն աստիճան որ Հազարամէկ Գիշերներու կարգ մը հեքեաթները պարզապէս յունական հեքեաթներու արաբական թարգմանութիւններ կը թուին. այսպէս, Սինպատ նաւաստիին արկանները, ինչպէս եւ Ալատինի ու իր հրաշալի կանթեղին պատմութիւնը: Դարերով՝ իրարու դէմ կռուած, ու նաեւ դաշնագիրներ փոխանակած, զինադուլներու մասին վիճած ըլլալով, այդ երկու հակառակորդ ազգերը իրարու շատ սորվեցուցած էին: Դադարներու միջոցին, վաճառանոցներուն վրայ բանակեալին ուր կը ծածանէր Մարգարէին կանանչ դրօշը հայ վաճառականը Կ. Պոլսոյ պերճագեղ հրաշալիքները կը նկարագրէր. ձիարչաւարաններու մայր-եկեղեցիներու շքեղութիւնները կը գովէր: Օրթոմք՝ քաղաքներուն մէջ երկայն աւերն մնալէ յետոյ երբ ազատ կ'արձակուէին, գերի բռնուած մահմետականները այդ վկայութիւնները կը հաստատէին: Քիչ ատենէն Վոսփորի ամբողջ քաղաքավարութիւնը իսկիֆաներու բարձրուն մէջ անցաւ: Պաղատի վաճառանոցներուն մէջ նրբախօսել սկսան ինչպէս Վլաքերնեանց եկեղեցիներուն մէջ. Արաբը վայելչախօս գարձաւ. նրբանուրբ հոնտորական ձեւեր գործածեց ու կատարեալ համարուելու արժանի քերթուածներ շարադրեց. Ոսկին ու մոզայիքը սարայներուն պատերը հագուեցուցին ինչպէս կը հաղուեցնէին բիւզանդական կանանոցներուն որմերը: Միեւնոյն ւաւանդովէպները խօսակցութիւնները ոգեւորեցին Տիգրիսի եւ Վոսփորի ափերուն վրայ. եւ երբ Սաչակիրները Երուսաղեմի առջեւ հասան, ասպետական Սալահտտիններու, ոսկեբերան Սիւլէյմաններու հետ է որ չափուեցան:

Այսպէս, Գրիգոր Նարեկացիի միտաբանական էջերը իր «Մատեան ոգեբերութեանց»ին մէջ,

կոմիտեանց քերականագէտներուն սիրելի եղող հետորութեան ամենէն զարմանալի ձեւերը կը յաւերժացնին Ձղջման աղօթքներուն մէջ, կան հոյակապներ, որոնք բիւզանդական վարպետներուն յորդառատ արուեստովը կը պճնեն հայ հանճարին յատկանշական բնութեան այդ գեղեցիկ ոգւամերը :

« Եւ քանզի ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զլուեալ ուժգին լըկանօք ի սպառ տազնապամբ ի ծովին, փոխեալ ընկեցեալ ի վտակն վայրենական ողողիչ, առ որս զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր ի հոսանաց բռնութեանց զարնանա զայր փետոց, արաածգեալ յակամայ ընթացս ողորմազին գլորման . ջրակուլ ողեսպառ պըղտորարբութեամբ, դաժանահոտ սկախառն մամռարմատ խառնախոիւ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուլխիցն հեղեղիցին հեղձուցեալ . այսու առակաւ եւ ես եղկելիս՝ խօսին եւ ոչ իմանամ, դոչէն եւ ոչ ինչ լսեմ, բարբառին եւ ոչ զարթնանամ, հնչեն եւ ոչ փոխադրիմ, փողեն եւ ոչ զուժարիմ, վերաւորիմ եւ ոչ եւս զգամ . »

Մարդկային տկարութեան այս զգացումը՝ ուժերու ճակատագրականութեան հանդէպ, մանկական ու զմայլելի քաղցրութեան շեշտեր կը ներշնչէ սիրերգու . նահապետ Գուշակին : Տարփանքը իր մէջ խօնարէ է, խեղդպցող, տղայական, բարձր քնարերգութեան յանկարծական թռիչներով :

« Հողի, թէ հողիս ուղես, չէ չասեմ, հանեմ տամ ի քեզ .
« Ապա թէ աչերս ուլես, ի՞նչով նայիմ դէպ ի քեզ : »

« Ես մեռնիմ ի քո վերայ, դու զքո ծամդ կարես
« Կտրես մաշալա վառես, ձեռքդ առնուս ու գիս փնտուես,
« Կամ ի հողվերօքս անցանես, հետ լնուս դաչերդ ու թափես .
« Գրկիկ մի վզիս ամես, զապառած վէմդ համբուրես : »

Մահերգներուն մէջ, հիացմամբ պիտի նկատենք ցաւի թանկադին շեշտեր, եւ խանդազատութի տեսակ մ'երանգներ զոր ուրիշ ո եւ է ցեղ չէ ճանչցած : Պատմական երգերուն մէջէն աչքի կը զարնէ «Ասլան աղայ»ին առակը . Գարբիէլ հրեշտակը կ'ուզէ անոր հողին առնել, ի բաց տուալ եթէ իրեններէն մին անոր տեղ

իր հողին տալու չափ դինքը սիրէ : Սրբ, ոչ հայրը ոչ մայրը այդ զոհողութիւնը յանձն չեն առնել : Բայց կնիկը կը հաւանի : Ամուսնական այս լաւատեսութիւնը, հայրական ու մայրական գորովներուն նկատմամբ այս անվտանգութիւնը մեր արեւմտեան պատրանքներէն շատ տարբեր իտէալի մը կը վերաբերին : Մեր բանաստեղծները, ընդհակառակն, կնկանը հաւատարմութիւնը պիտի ծաղրէին, ու մօրը անձնուիրութիւնը պիտի փառաբանէին : Տարփանքը, Արեւմուտքի մէջ միշտ անկայուն է նկատուած, եսական համարուած . բոլոր սկեպտիկները զայն տանտինը կ'առնեն . Արեւելքի կեանքը, աւելի խիստ՝ կնիկներուն համար . որոնք իրենց վրայ ամենազօր եղող ամուսիններէն ուրիշ նեցուկ չունին, զէնոնք կը տըրամադրէ անշուշտ այդպէս զոհելու իրենց էութիւնը, որ այրը կը սիրէ ինք իրեն համար, եւ ոչ թէ իր շոյալած հաճոյքներուն, իր բաշխած օգուտներուն համար :

Ասոնցմով, նմանօրինակ ուրիշ լոյսերով, կը յայտնուի այս գրքին մէջ, փափուկ, մասնաշատուկ ու հետաքրքրաշարժ հողին շատ հին ժողովրդի մը, որուն բեղուն իմացականութիւնը բոլոր արուեստներուն միջոցով արտայայտուեցաւ : Երանի՛ թէ այն անկեղծ ճայները որ կը հնչեն այս հաւաքածոյին մէջ, յուզէին սրտերը, համոզէին մտքերը հզօր բարձր-դասերուն, որպէս զի անոնք զիրենք ա՛լ աւելի բարեկամ ու պաշտպան յայտարարեն այս հրնարամիտ, յամառօրէն արտադրող եւ ճակատագրին անիրաւութեան տակ կ'քած ցեղին :

ՓՈՒ Ա.ՏԱՆ

ՄՐՐ ԴՐԱՑԻՆԵՐԸ

ՏԻՒՐ ԶԻՆ
—●—

Ի՞նչ մըն ալ ուշադրութիւննիս դարձնենք ուրիշ հերոս ժողովրդի մը վրայ, պատմական փառաւոր անցեալ ունեցող ուրիշ ասպետական տարրի մը վրայ, որ այսօր «Տիւրքի» անունով կը ճանչցուի համայն աշխարհի մէջ, եւ որ

կը բնակի Լիբանանու հարաւ-արեւելեան մասերը, Դամասկոսի մօտերը՝ խորասուզուած անտառներու եւ սպառաժներու մէջ՝ անդա- դը կուի կը մղէ ընդդէմ թուրք տիրապե- տութեան :

Անոնց անունը վերջին քառորդ դարուս մէջ մղած մէկ քանի հերոսական պատերազմներով միայն ծանօթ դարձաւ Հայոցս . անոնց եր- կիրը, ցեղը, պատմութիւնը, կրօնքը, բար- քերն ու սովորութիւնները դեռ անհանօթ կը մնան մեզի դժբաղդաբար :

Ասոնք ալ եղած են եւ կը գտնուին ճիշդ թաթերու հանգամանքներուն մէջ, մահմետա- կան դարաւոր եւ երկարատեւ տիրապետու- թիւնը մոռցնել տուած է իրենց կրօնքն ու ծագումը, եւ թողած է զիրենք թանձր խաւարի մէջ՝ ազէտ ու վայրենի :

Նմանապէս, թաթերու նման իրենց շեխե- րովը կազմակերպուած են ու կը կառավարուին, բազմաստուածութիւնը կ'ընդունին, կը հաւա- տան սուրբերու, կախարհութիւններու ու հրաշքներու :

Գող եւ աւազակ ժողովուրդ են, միանգա- մայն շատ միամիտ, քաջ ու վեհանձն են : Մոլութիւնը կ'ատեն եւ շատ բծախնդիր են կանանց պատուոյն . բուն այս կէտն է որ ան- դունդներ բացած է իրենց եւ թրքաց միջեւ . անոնց դէմ մղուած իրենց պատերազմներուն մեծագոյն մասը գրեթէ այդ պատճառով եղած են :

1895ի Զէյթունի ապստամբութեան անա- կընկալ դաշնակիցները եղան . ճիշդ այն ատեն երբ Զէյթունը արեան եւ կրակի մէջ էր, Հա- յութիւնը ամէն կողմէ ընկճուած, ջլատուած, անկարող եւ յուսահատ՝ անտարբեր կը դիտէր այդ ափ մը ժողովրդի հերոսային թատերա- բեմը . երբ վերջապէս Մակեդոնիան քնացած եւ կրետէն անպատրաստ էր, հինգերորդ զօ- րաբանակը իր ամբողջ կատաղութիւնն ու զօրութիւնը ուղղած դէպ ի այդ քաջերու որջը, զայն խորտակել ու ջնջել կը սպառնար . անա արեւմտեան կողմէն ուրիշ ժողովուրդ մը, մեզի անծանօթ դրացի եւ անակնկալ դաշնա- կից մը . Ղրուխը ցնցեց, Լիբանանու անտառնե- րէն դուրս թափեցաւ, գոռոզ ու յարձակող, Դամասկոսը պահպանողական դիրքի դատա- պարտեց, թշնամին շփոթութեան մատնեց, ուժերը ջլատեց եւ խոշոր մաս մը զինուորա- կան գունդեր իրեն բաժին առաւ, եւ կտտ ե-

ցաւ աւելի երկար ատին քան Զէյթունը, եւ վերջապէս հոտ ալ յաղթանակը ուժին մնալով Տիւրքիները պարտաւորուեցան անձնատուր ըլլալ եւ պատերազմը վերջացնել որոշ պայ- մանագրութիւններով :

Յաղթական թուրքերու գոռոզութեան ու ամբարտաւանութեանը շփոթմանալով, ասորին չբողոքած, կրետէի յեղափոխութեան ճիշդ սկիզբ վերջին ճիգ մը եւս թափեցին, պատուաճախա- չութեան ու զրէժխնդրութեան կատաղի կուի մի եւս մոցցին :

Թուրք հազարապետի մը իրենց պատուոյն դէմ գործած թշնամանքէն կատղելով յարձակեցան անոր վրայ, զայն կտոր կտոր ըրին եւ անոր գունդը ոչնչացնելով զէնքերնին գրաւեցին, եւ երբ մօտակայ գիւղերու թուրք վաչտերը օդ- նութեան կուգային, դարանի մտան ու զանոնք պաշարման մէջ ձգեցին, ջարդեցին ու գերի առին . «Ութ օր հացի տեղ խոտ արածեցինք եւ ջրի տեղ արիւն խմեցինք, մեր գունդը 800 հոգիէ բաղկացած էր, միայն 200 հոգի ողջ մնացինք եւ Տիւրքիներու ձեռք գերի ինկանք» գրած էր թուրք զինուոր մը՝ այդ պատերազմը նկարագրելով :

Երբ Սուլթանի կառավարութիւնը ամբողջ զօրութիւնն ու մտածումը նուերած էր Յու- նական պատերազմին, չորրորդ եւ հինգերորդ զօրաբանակները Հայոց եւ Տիւրքիներու համար վերապահուեցան : Առաջինները բոլորովին ջը- լատուած ըլլալով չկրցան ոչ մէկ տեղ գլուխ բարձրացնել, բացառութիւն կաղմելով միայն Սուէտիա ուր յեղափոխութեան մը սկզբնա- լորութիւն ծագում առաւ, բայց չկրցաւ տա- րածուիլ որովհետեւ նիւթական ուժը զղալա- պէս կը պակսէր . տասն եւ եօթը օր միայն կեանք ունեցաւ այդ փոքրիկ յեղափոխու- թիւնը, սինչեւ որ երկու կողմի զիջողու- թեամբ ըմբոստեանքը զէնքերնին վար դրին : Թուրք կառավարութիւնը զիջանեցաւ եւ պայ- մանաւորուեցաւ այդ փոքրիկ խմբի հետ, ու- րովհետեւ մէկ կողմէն կրէտէն, միւս կողմէն Տիւրքիները օտար վրայ էին, եւ յունական պատերազմը կը սպառնար . իսկ յեղափոխական խմբակը յանուն իւր երկրի ժողովրդի, բա- նակցեցաւ երկրին շատ շնչին ու աննշան շահերուն ու իր ժողովրդի փոքրիկ իրաւունք- ները՝ քանի յունական պատերազմը կար, բացի հայ պաշտօնակալի մը պաշտօնաանկութենէն

որ խոստացաւ եւ անգործադիր թողուց: Յեղի
խմբակն ալ քիչով գոհացաւ, որովհետեւ ա-
ռանց ատոր ալ զինաթափ ըլլալու ստիպուած
էր:

Գալով Տիւրքիներուն, նախորդ պա-
տերազմէն յողնած ուժասպառ եւ բոլորովին
անպատրաստ, անկարող եղան երկրորդ եւ
երկարատեւ ընդդիմադրութեան մը: Հազիւ
30-40 օրուան չափ կրցան զիմանալ, ու չա-
րաչար յաղթուեցան այս անգամ, եւ Հայաս-
տանի մէջ կատարուած ողբերգութիւնը հոն
ալ կատարուեցաւ:

Թուրք հազարապետ մը, օր մը անոնց քա-
ջութիւնը նկարագրելու համար հետեւեալը կը
պատմէր. «Տիւրքիներուն չեխերը ընդհանուր
հրամանատարի առջեւ հարցուփորձի ժա-
մանակ կը պատասխանէին թէ՛ — Մեր զա-
ւակները մորթեցիք, տներնիս հրդեհեցիք,
գոյքերնիս թալանեցիք, եւ այգիներս ու ար-
տերնիս ոչնչացուցիք, ասոնց ամէնքը կարելի
էր օր մը մոռնալ եւ երկու ցեղերուն մէջ
եղբայրութիւն վերահաստատուել, բայց մեր
կանանց պատիւը անարգեցիք, որ անգարմա-
նելի եւ անմոռանալի պիտի մնայ մեզ, մեր զա-
ւակաց, մեր թոռներուն ու թոռան թոռնե-
րուն»:

Կը ցաւիմ ըսել որ Տիւրքիներու ներկայ
կացութեան վրայ բան մը չպիտի կրնամ
խօսիլ եւ կրկնապէս ցաւալի է՝ որ ոչ անոնց
հետ յարաբերութիւն ընելու առիթը, եւ ոչ
երկիրնին այցելելու բազմ ունեցած եմ, որ
կարողանայի աւելի լայն տեղեկութիւններ
տալ անոնց աշխարհագրական, քաղաքական,
տնտեսական եւ բարոյական կացութեան վրայ:
Պէյրութի, Դամասկոսի եւ Հալէպի մէջ կան
Հայեր որ անոնց հետ շփման մէջ են եւ գի-
տեն բնականաբար անոնց ներքին հանգա-
մանքները: Ո՞րքան երջանիկ պիտի ըլլայինք
եթէ բարենաճէին մեզի տեղեկութիւններ տալ
այդ մասին:

ՊԱՀԼԱԻ



ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ՖՐԱՆՍԻՍՏՈՒՄ

Ամենին յայտնի է որ Ֆրանսական ազգը
մեծադոյններէց մինն է: Բայց այդ մեծու-
թիւնը միայն նորա ներկայ գործերով չի
չափուում, այլ եւ նրա անցեալով, որը նոյն
խոյն հեռաւոր ազգերի համար հետաքրքրական
եւ հրահանգիչ է: Այս տեսակէտից Ֆրանսիան
անցեալում այն տեսակ գործեր է կատարել,
որոնցից հարկաւ միւս ազգերը մեծապէս պի-
տի օգտուին: Ուրեմն Ֆրանսիայի քաղաքակը-
թական դերը սահմանափակ չէ եղել: Նա խթան
է եղել ուրիշ ազգերու համար՝ օրինակ տալով
նրանց յառաջադէմ շաւղով ընթանալու: Բացի
իր հոչակաւոր յեղափոխութիւնը, որ անմահ-
ացրե Ֆրանսական ազգի միտքը՝ մենք նորա
պատմութեան մէջ կը գտնենք ուրիշ շատ
անցքեր, որոնք շատ են աջակցել յառաջադի-
մութեան գործին: Ներկայումս էլ Ֆրանսան
եւ չէ մնացել իր հարեւան ուրիշ մեծ ազգե-
րից: Նա ժի քանի ասպարէզներում առաջնա-
կարգ դիրք է բռնում, չնայած իր հետ կատա-
ղի կերպով մրցող ազգերին, որոնք աշխատում
են խլել նրանից այդ առաւելութիւնը: Վերջին
1900 թւի համաշխարհային Յուցականգէսում
մի բան անհերքելի էր երեւում, այն է՝ որ
Ֆրանսական արդիւնքները պահպանել են ի-
րանց նախկին համբաւը: Ֆրանսիական բոլոր
արդիւնքների մէջ երեւում է եղել շնորհք,
աննման ճաշակ եւ կատարելագործութիւն:
Այո՛, 1870 թւի պատերազմում կրած պարտու-
թիւնը Ֆրանսիայի համար մի լուրջ պատմական
դաս եղաւ: Ֆրանսա լաւ նկատեց իր պակա-
սութիւնը այդ դժբաղդ պատերազմից յետոյ:
Նա իր բոլոր ուժը դրեց՝ լուսաւորութեան
կողմից Գերմանիային եւ Զուլիցերիային հա-
ւասարելու: Նա այսօր անկասկած հասել է այդ
նպատակին: Եթէ աւելացնենք այս առաւելու-
թեան վրայ, Ֆրանսացու ազգային բնածին
յատկութիւնները, այն ժամանակ նա կը հան-
գիտանայ մեր աչքին իբրեւ ամենէն քաղաքա-
կիրթ ազգը Եւրոպայում: Ճիշտ է, Գերմանիան
աշխարհի զարմացրեց իր տնտեսական յառա-
ջադիմութեամբ: Մի՞թէ աւելի զարմանք չի
յարուցանում Ֆրանսական եռանդն եւ ուժը:

երբ այդ ազգը 1870 թւին կորսնցնելով ասան եւեթ միլիարդ ֆրանկ¹⁾ եւ 200,000 մարդ , շուտով կարողացաւ ոտքի կանգնել . եթէ նոյն դժբաղդութիւնը Գերմանիային պատահէր՝ նա երբեք չէր կարող այդպէս շուտով վերականգնել իր տնտեսական դրութիւնը : Գերմանիայի արդի տնտեսական բարգաւաճումը առաջ է եկել իսկապէս այդ հինգ միլիարդ ֆրանկի շնորհիւ , որ նա ստացաւ Ֆրանսիայից եւ այն երկու գաւառներն շնորհիւ (Ալզաս եւ Լորէն) որ նա յափշտակեց :

Տնտեսապէս բարգաւաճ Ֆրանսիայում վերջին 15 տարուայ ընթացքում ծագել է մի շատ տխուր երեւոյթ , որ մասամբ դոյութիւն ունի եւ ուրիշ եւրոպական երկիրներում : Խօսքս վերաբերում է այն զարգացած դասակարգին որ բարձր ուսում է ստանում , բայց պաշտօն չէ գտնում իր ապրուստը հայթայթելու համար : Մինչեւ այժմ բանւոր դասակարգի խնդիրն էր գրաւում հասարակութիւնների աչքը , այսօր այդ դասակարգին կից դոյացել է մտաւոր պրոլետարիատը որ հետզհետէ աւելնալով՝ սոսկալի հետեւանքներ պիտի յառաջ բերի : Ֆրանսիայում մի պետական պաշտօնի համար յայտնուում են 50 ցանկացող-թեկնածու : Երբ դուք կարդում էք այդ երեւոյթին վերաբերող վիճակագրական թիւեր , մնում էք ապշած եւ ակամայ հարցնում թէ ո՛ւմ համար են այնքան բարձրագոյն ուսումնարանները : Կարծես Գերմանիան եւ Ֆրանսան մրցում լինին իրար հետ թէ իրանցից որ մէկն սուելի շատ ուսանող կ'ունենայ համալսարաններում : Կարժամանակ որ ուսումնարարտ երիտասարդութիւնը հեշտութեամբ ձեռք էր բերում պաշտօններ : Այդ երջանիկ ժամանակն , ըստ երեւոյթին , անցել է արդէն , որովհետեւ փոխուել են ընկերական պայմանները : Երիտասարդութեան համար անորոշ է ապագան եւ չէ արդիւնաբերում նրա յոյսերը , բայց եւ այնպէս կրկնապատիկ , եռապատիկ աւելի բժիշկներ , փաստաբաններ , ուսուցիչներ եւայլն կան քան թէ պահանջում է երկիրը : Այսօր Ֆրանսիայում 13,000 բժիշկ կայ , որոնցից 3000 Պարիզում , մնացածը դաւառում : Ինչպէս պատմում են , այսօր 1200 բժիշկ կայ մայրաքաղաքում , որոնք չեն կարող ապրուստ ձեռք բերել իրանց դիրքին համեմատ եւ սակայն համալսարանները

(1) Պատերազմական տուգանքը 5 միլարդ էր , իսկ 12 միլիարդ ուրիշ ծախքերն էին :

Ֆրանսիային տալիս են տարեկան 1200 նորաւարտ բժիշկ , որոնց կէօք գործ չէ գտնում : Այս հանդամանքն անշուշտ բժշկութեան վարկը պիտի վայր գցէ , քանի որ նա մարդու ապրուստն չի ապահովում եւ շատերին պրոլետարիատի շէմին գցում : Նոյնը պէտք է ասել իրաւաբանների մասին , որոնց մեծ մասը հարկադրուած դիմում են ոչ մի իրաւաբանական կերպարանք շունեցող գործերի , հակառակ իրանց կոչման : Մտաւոր պրոլետարիատի թիւը Ֆրանսիայում ամենից շատ մեծացնում են ուսուցիչներն եւ վարժուհիները , որոնք մօտ 150,000ի են հասնում : Ընդհանուր կարծիքն այն է , որ նրանցից 100,000ը գտնուում են նւթապէս նեղ դրութեան մէջ , որ համարեայ չի տարբերում չքաւորութիւնից : Այդ կարգի ուսուցիչներն ստանում են 1000 մինչ 1500 տարեկան ուժիկ , որ չի կարող գոհացնել զարգացած մարդու ամենաճամեստ պահանջները : Մարդ սոսկում է երբ իմանում է թէ հէնց Պարիզում 150 ազատ ուսուցչական պաշտօնների համար յոյտնուում են 15,000 ցանկացող : Այս անկարգ պայմաններում ուսուցիչները սովորուած դիմում են իրենց կոչման անհամապատասխան ամենատար պաշտօնների՝ ապրուստ ձգելու , իսկ վարժուհիները , թողնում եմ ընթերցողի եղբակացութեան : Չնայած սրան , ունանողների թիւն աւելանում է բարձրագոյն ուսումնարաններում : Այսօր այդ թիւը հասնում է 27,000ի ամբողջ Ֆրանսիայում : Երանցից միայն Պարիզում ուսանում են 14,000 մարդ : Սրանից 23 տարի առաջ , 1878 թուին Ֆրանսիայում եղել են ընդամէնը 10,972 ուսանող : Ուրեմն նրանց թիւը այս կարճ ժամանակում համարեա թէ կրկնապատկուել է : Ուսանողների մեծամասնութիւնը պատկանում է չքաւոր դասակարգին , եւ չնայած դրան՝ նրանք զարձեւալ պատերազմում են՝ մի այնպիսի ասպարէզի համար որ նրանց չի ապահովելու : Գոյութեան է դիւր ազեղ եւ անտանելի կերպարանք է առել ուսումնաւարտ մարդկանց յարմար ասպարէզներում : Կեանք մտնելիս՝ նրանք հիառութեւնում են , իշխող պայմանները ամենայն դառնութեամբ հալածում են նրանց : Այսպէս գնալով աւելանում է դժգոհ մարդկանց բանակը եւ հասարակութեան խռովեւ ղնում է իրանց անտանելի դրութեան խնդիրը : Նոյն իսկ պաշտօն գտնողներն ստա-

նում են անբաւական վարձատրութիւն՝ թանգ ապրուստի ծախքերը ծածկելու համար Սրանից քառասուն տարի առաջ երեք հազար ֆրանկ ոտճիկը հաւասար է եղել ներկայ ինն հազար ֆրանկ ոտճիկին. ասել է թէ դրամն այն ժամանակը աւելի արժէք է ունեցել, ԺԹ. դարի կէսից սկսած մինչ այժմ դրամի գինը գնալով պակսել է, — գլխաւորապէս ոսկու եւ արծաթի շատութեան պատճառով, — հետեւաբար անհյաժեշտ մթերքների գները բարձրացել են, Բայց պետական ծառայողների վարձատրութեան չափը համարեա թէ նոյնն է մնացել: Եւրոպական պետութիւնները ԺԹ. դարի երկրորդ կիսում մեծամեծ ծախսեր արին ներքին զործերի համար: Այդ հանգամանքը պաշտօնեաների աւելի մեծ թիւ պահանջեց: Դրա համար էլ ծախսերն (թիւթեւոններն) աւելացան, իսկ այդ վերջրնները հոգալու համար պէտք է նորանոր ծանր հարկեր դրուէին ժողովրդի վրայ: Նոր պայմաններում անկարելի էր ծառայողների ոտճիկներն աւելացնել, որովհետեւ այդտեսակ դէպքում դարձեալ պիտի նոր հարկեր դրուէին, որոնք խտուր կը ծանրաբեռնէին ժողովուրդի կեանքը: Ուրեմն զարմանալի չէ որ ծառայողների վարձատրութիւնն առաջուայ պէս անշարժ դրութեան մէջ է մնացել:

Մտաւոր պրոլետարիատը մինոր երեւոյթ է որով լրջօրէն զբաղուած է ներկայումս ամբողջ եւրոպական մամուլը. այդ ցաւն առանձնապէս իշխում է այն երկիրներում, որոնք ռազմական են, ինչպէս են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, եւ այլն: Իսկ Ամերիկայի Միացեալ Նահանգներն եւ Անգլիան զերծ են մնացել այդ փտտից: Այդ երկու երկիրներն իրանց յատուկ առեւտրական եւ արդիւնաբերական բանւորութիւնն ունին. այնտեղ բոլոր երիտասարդութիւնը հասոտա զբաղմունք եւ ապահովութիւն է գտնում արդիւնագործական ասպարէզում: Թէ ռազմական երկիրներում որքա՞ն են զարգացել մտաւոր ու ազատ պարապմունքները — հաւ ձեզ թւեր: Ֆրանսիայում մտաւոր եւ ազատ պարապմունքներ. 1856 թւին 9,1 % , 1886 թւին՝ 11,1 % , 1891 թւին 12,7 % : Ուրեմն մտաւոր պարապմունքները աւելացել են: Դիւղատնտեսական պարապմունքներ 1856 թւին 52,9 % , 1886 թւին 47,8 % , 1891 թւին 47,3 0/0 է: Արդիւնագործական պարապմունքները եղել են նոյն յիշուած թւերին՝ 29,1 0/0,

25,2 0/0 , 25,3 0/0 . այս պարապմունքները պակասել են 10,73 0/0 :

Գերմանիային վերաբերող թիւերն աւելի եւս վատթար կերպարանք են ներկայացնում. թողնենք թիւերը եւ կանգ առնենք լուսարանելու այն միջոցները, որ եւրոպական մամուլը առաջարկում է մտաւոր պրոլետարիատի աւելման առաջն առնելու համար:

Գլխաւորապէս չունեւոր ծնողները իրանց որդիներին ուղարկում են համալսարանները յուսալով թէ աւարտելուց յետոյ՝ նրանք պաշտօն կ'ստանան պետական ծառայութեան մէջ: Այս պաշտօնացաւը վարակել է երիտասարդներին, որոնք անընդունակ են թափանցել կեանքի նոր պայմանների մէջ, Նրանք յենւում են լոկ այն իրաւունքի վրայ, որ նրանց տալիս է բարձր ուսումը՝ պետական ծառայութեան մէջ մտնելու: Նոքա մոռանում են, որ խնդիրը այստեղ իրաւունքը չէ, Բանը այն է որ պետութիւնները կարո՞գ են արդեօք համալսարանաւարտ մարդկանց տեղ տալ իրանց հիմնարկութիւնների մէջ, Իրողութիւնը այն է, որ պաշտօն որոնողները մեծագոյն մասը ուղղակի մերժում է ստանում պարապ տեղեր չը լինելու պատճառով: Մեր ժուածների մէջ ընկնում է հիասթափութիւն, դառնութիւն եւ վրդովմունք: Վիճակը տագնապալից է դառնում: Այնուհետեւ նրանց աչքում ճշդոււմ է այն լատինական առածը, որ ասում է թէ «Նախ ապրիլ, ապա՝ փրիլսոփայի»: Եւ նրանք իսկ որ դիմում են այնպիսի մասնաւոր պաշտօնների որոնք համար պատրաստութիւն չունին, եւ այդտեղ էլ սակաւ անդամ կարողանում են յաջողութիւն ունենալ: Եթէ այդ է վերջը, հարցնում են, ուրեմն էլ ինչո՞ւ չպատրաստել այն ասպարիզի համար, որ կարող է կերակրել եւ ապահովել: Չէ՞ որ ուսման չորս հինգ տարի ապարդիւն են անցնում: Աւարտողների գլխաւոր նպատակը վկայական ձեռք բերելն է եղած, որ այլ եւս սպասածի համեմատ չի գնահատում: Չուտ գիտութեամբ միայն փոքրամասնութիւնն է պարապում, որ եւ յաճախ տաղանդներից է կազմուած լինում: Մամուլն աչք է դարձնում այս նշանաւոր հանգամանքի վրայ եւ պահանջում է փոխել համալսարանական ուսման պայմանները. նամանաւանդ թէ երիտա-

սարգններին կեանքի համար պատասխանելու, տալով նրանց գործնական գիտելիքներ: Շատ ազեղ երեւոյթ է մտաւոր պրոլետարիատը: Նա վերաւորում է քաղաքակիրթ ազգերի ամենատուրը զգացողները: Բարձրագոյն ուսման պատիւն ընկնում է, երբ չի կարողանում փրկել մարդկանց անպահով գրութիւնից: Բայց ի՞նչն էր նպատակը գլխաւորապէս բարձր ուսում ստացողների աւելմանը: Յայտնի է, որ սկսած 19րդ դարի կիսից, եւրոպական երկիրները բազմաթիւ երկաթուղիներ շինեցին: Այս պիտով հեշտացաւ հաղորդակցութեան գործը: Փոստային գործն ու ժողովրդական լուսաւորութիւնը նոյնպէս ընդարձակ ծաւալ ստացան: Միաժամանակ անսովոր չափերով զարգացաւ ռազմականութիւնը նիւթապէս ազգեր կեղեքելու համար: Այս բոլոր գործերը ակամայ պիտի աւելացնէին ծառայողների եղած թիւը: Այդ պահանջը արձագանք գտաւ երիտասարդութեան կողմից, եւ պաշտօնեայ դառնալ ցանկացողների հոսանքն անընդհատ յորդանում է: Իրերի այսօրինակ ընթացքը նպաստել է չափից դուրս պաշտօնամոլութեանը: Մինչեւ անգամ սկսել են աւելորդ պաշտօններ ստեղծել որ ոչ մի օգուտ չեն բերել եւ միայն տեղական ծախսերն են աւելացնում, իսկ տուժող միշտ չարքաշ ժողովուրդն է մնում: Պաշտօնամոլութեան ծայրայեղ զարգացումը Եւրոպայում նկատուում է ամենուրեք: Ճրանսիան այդ բանում զարմանալի կերպով գերազանցում է ուրիշներին: Այստեղ 1846 թուին պաշտօնների թիւը հասնում էր 188,000 ի եւ պետութեանը նստում էր տարեկան 245 միլիոն ֆրանկ: Իսկ 1896 թւին պետական ծառայողների քանակութիւնը արդէն հասել էր 416,000 ի եւ տարեկան նստում էր 927 միլիոն ֆրանկ, մօտ 230 հազարը կազմում է 50 տարւայ ընթացքում աւելցած թիւը, գրանցից միայն 180 հազար հոգի այնպիսի պաշտօններ են ստացել, որոնք անհրաժեշտ են երկրին: Մնացած 50 հազար պաշտօնները ստեղծւել են կողմնակցութեան շնորհով, այսինքն արհեստական ձևով՝ ի վնաս ժողովրդական շահերի: Սա մի ամօթաբեր չարիք է երրորդ հանրապետութեան համար: Սրտացաւ մամուլը ամենայն իրաւամբ բողոքում է այս՝ ուրիշ խօսքով ասած՝ հրէշային երեւոյթի դէմ: Նա պահանջու է վե-

րանորոգել արդի բարդ վարչութեան կազմը, որ հարիւր տարի դոյութիւն ունենալուց յետոյ՝ հնացել է եւ չի համապատասխանում ժամանակի պահանջներին: Այդ վարչութիւնն է, որ սերնդներին վարակել է պաշտօնայաւորի Ֆրանսիական վարչութեան բոլոր կազմը կենտրոնականութիւն է: Երկիրը կասաւարող բոլոր մարմինները կտխումն ունին մի կենտրոնից, որ ամէն բան կարգադրում է իր նախաձեռնութեամբ: Բոլոր գաւառական մասնաբաժինները ենթարկուում են կենտրոնից տրած գործելու եղանակներին: Ամեն ինչ կատարւում է մի շարք պաշտօնական մարմիններից անցնելով, որոնք իսկապէս աւելորդ եւ ժամավաճառ ձեւակաւութիւններ են: Երբ դեռ չկային այսօրուայ մեր հաղորդակցութեան միջոցները, յիշած վարչութեան եղանակը օգտաւէտ է եղել, մանաւանդ գործերին վերահսկելու նկատմամբ: Երկայաւուս անսահման կենտրոնականութիւնը ապարդիւն է դարձել ընկերական տեսակէտից: Նա մի աղբւր է միայն, որից մարդիկ յագեցնում են իրանց ծառայող դառնալու փուչ ծարաւը: Ֆրանսիական հասարակութեան կարծիքն այն է, որ անպայման պէտք է փոխել կրթութեան միջոցով երիտասարդների այդ վատառողջ ուղղութիւնը: Երիտասարդութիւնը գործնական գիտելիքներով միշտ կարող է պարագմունք գտնել: Վերջապէս Ֆրանսիան շատ հարուստ գաղութներ ունի, որոնք կարօտ են մշակող եւ արդիւնագործող ուժերի: Սպասում են թէ գործնականապէս պատրաստւած երիտասարդները այդ երկիրները կը գնան եւ այնտեղ անտեսական գործունէութիւն կ'ունենան եւ քաղաքակիրթութիւն կը տարածեն: Արդէն մի քանի օրինակներ մայր երկրին յաջողութեան բաւարար նմուշներ են տւել եւ յոյս կայ, որ այդ հոսանքը սովորութեան կերպարանք կտունի 1):

1) Երեւելի կրիտիկոս Թենին, որդի ուրիշների հետ Տունիսում ձեռնարկել է գիւղատնտեսական գործերի եւ ունեցել մեծ յաջողութիւն:

պով եւ մերթ անբաւարար , երբ բնակիչներն թիւ կամ չափազանց է աւելանում կամ թէ բոլորովին անշարժ է մնում : Կէս դարից աւելի է , որ խնդիրը հրապարակ է եկել եւ դեռ եւս բաւականաչափ որոշ լուծում չէ ստացել : Բայց արդէն գիտութիւնը կարողացել է մըշակել օրէնքներ , որոնք մօտեցնում են որոնուած ճշմարտութեանը : Ի հարկէ դեռ շատ կը յայտնուին թեր եւ ղէմ կարծիքներ , որոնք յամենայն ղէպս կարող են պարզել խնդրի էութիւնը : Այդ աշխատանքից կ'օգտեն այն բոլոր ազգերը , որոնց համար ազգաբնակչական շարժումներն ստացել են առանձին կենսական նշանակութիւն : Եւրոպական ազգերի մէջ այս խնդրով ամենքից շատ զբաղած է Ֆրանսիան , որովհետեւ այս երկրում նա շատ սուր կերպաբանք է ստացել : Համեմատած հարեւան երկիրների ազգաբնակչութեան թւի հետ , Ֆրանսիա յետամնաց գրութեան մէջ է : Թշնամիներն , օգտուելով այս առիթից , սկսել են խղճալ Ֆրանսիական ազգին եւ յանդգնում են մինչեւ անգամ նորա քաղաքակրթութեան մեծութիւնը հերքել : Թթու ազգասէրներն էլ իրենց կողմից աղաղակ են բարձրացրել եւ անբնական միջոցներ են առաջարկում ազգաբնակչութիւնն աւելացնելու համար : Ազգաբնակչութեան մասին խօսելիս՝ պէտք է աչքի բռնենալ ոչ միայն նրա աւելանալը այլ եւ պակասիլը : Իրողութիւնը այն է , որ ազգաբնակչութիւնը եւրոպական բոլոր երկիրներում պակասում է : Վիճակագրական թւերը բարեբախտաբար ապացուցում են մեզ այդ բանը եւ փարատում այն սխալ կարծիքները , որոնց ասելով դուրս է գալիս , որ իբր թէ Ֆրանսիան բարոյապէս ընկել է եւ այլասերել : Պէտք է իմանալ թէ գլխաւորապէս ի՞նչ պատճառով են ազգերը պակասում կամ աւելանում : Անկասկած՝ թիւը մասամբ միայն գրաւական է մի ազգի ուժի : Սակայն ազգային քաղաքակրթութիւնը միայն կոպիտ ուժով չափաի չափել , այլ եւ մանուաւնդ այն գործերով , որոնք ամրացնում են նորա բարոյական ինքնուրոյնութիւնը : Ոչ , Ֆրանսական ազգը նոյնքան մեծ է եւ առաջնակարգ , որքան անցիալում , չնայած իր ազգաբնակչութեան թւի համեմատական փոքրութեանը : Այդ տեսակէտից վիճել անգամ աւելորդ է : Ով կարողացել է Ֆրանսիական նորագոյն պատմութիւնը , նա կը պնդի առանց վարանման , որ այդ ազգը

փառաւոր գործեր է կատարել յօգուտ մարդկութեան : Ճշմարիտ է , որ նա այս վերջի երեսուն տարուայ ընթացքում փակած մնաց մի որոշ շրջանակում , բայց առանց հրաժարւելու իրան յատուկ զբոյց : Նա պիտի հաւաքէր իր բոլոր բարոյական ուժերը , որոնց շարք էին պատմական սարսափելի պայմանները : Վերանորոգուած՝ նա ներկայումս սպասում է այն վսեմ ընդհանր երբ ազգաբնակչութեան զբոյսկը ձեռքին , կարող կը լինի սկսիլ այն գործունէութիւնը , որի համար կոչուած է նրա հանճարը :

Ազգաբնակչութեան խնդիրը սերտ կապ ունի տնտեսական եւ ընկերական պայմանների հետ : Հետեւաբար ազգաբնակչական թւի իջնելու կամ բարձրանալու գաղտնիքը առաւելապէս նոյն այդ պայմանների մէջ պիտի որոնել : Այդ պայմանները յատուկ են բոլոր եւրոպական երկիրներին եւ համարեա թէ միեւնոյն են ամեն տեղ : Թւերը մեզ կ'ապացուցեն , որ այս ենթագրութիւնը ճիշտ է : Անգլիայում 1876 թւին ամեն մի հազար բնակչի վրայ ընկնում էր 34,8 ծնունդ , իսկ 1833 թւին — արդէն 30.6 0/0 : Գերմանիայում 1876 թւին — 49,9 0/00 ծնունդ , իսկ 1883-ին — 36,7 0/00 ծնունդ : Իտալիայում 1876 թւին — 39,2 0/00 , իսկ 1886-ին — 36,6 0/00 : Վերջապէս Ֆրանսիայում 1876 թւին , հազար մարդու վրայ ընկնում էր 22,6 0/00 , իսկ 1886-ին — 22,1 0/00 : Պատկերից պարզ երեւում է , որ ծնունդների պակասիլն ընդհանուր երեւոյթ է : Այս երեւոյթի մեկնութիւնը զիւրութեամբ կը գտնենք եթէ թերթիչու լինինք տնտեսական պատմութիւնը 19 դարի երկրորդ կիսում : Մինչեւ 1875 թւականը արդիւնաբերութեան գործը մեծաւ մասամբ կատարւում էր մարդկային ձեռքի օգնութեամբ : Բանւորը միշտ գործ էր գտնում : Նիւթական ապահովութիւնը ազգում էր բանւորի ոգու եւ մտքի վրայ : Ընտանիքի բազմամարդութիւնը չէր աւելացնում նրա մտատանջութիւն պատճառող հոգսերի թիւը : Բանւորի կիներն ու երեխան՝ կրցող հասակում , նոյնպէս աշխատում էին եւ ապահովում իրանց ապրուստը : Գոյութեան կուռի պայմաններն անտանելի չէին : 1875ին՝ երեւան են դաւլիս արդիւնաբերութեան այլ պայմաններ : Մարդկային ձեռքի տեղն հիմա բռնում է մեքենան : Մեքենական ուժով կատարող արդիւնագործութիւնը դուրս է մղում մար-

դուն անձեռնառ զառած ֆիզիքական ուժը : Այս փոփոխութիւնը իջեցրեց աշխատանքի նախկին գինը : Բանւորն անկարող էր այնուհետեւ օրավարձով ապահովել իր ապրուստը : Աշխատանքի պայմանների փոփոխութիւնը առաջ բերաւ բանող եւ գործող դասակարգերի մէջ այլ կարգի սովորութիւններ եւ ցանկութիւններ : Բազմամարդ ընտանիք ունենալը մի ծանր եւ անտանելի բեռ դարձաւ մարդկանց համար : Այս հայեացքը թափանցեց եւ վարակեց ազգաբնակչութեան գրեթէ բոլոր խաւերը եւ ունեցաւ այն հետեւանքը , որ այժմ արտայայտուեմ է ծնունդների պակասման մէջ : Մեքենական արդիւնաբերութիւնը անխուսափելի զարգացման գործ էր եւ պիտի կերպարանափոխող ազդեցութիւն ունենար ազգաբնակչութեան վրայ : Բացի այս հիմնաւոր պատճառը , տնտեսական եւ քաղաքական ազդեցութիւնները փոփոխում են ազգաբնակչութեան թիւը , բայց ոչ տեւողապէս : Օրինակ՝ Պրուսիայում 1860 եւ 1869-72 թւերին ստակալի պատերազմները ծնունդների թիւը նւազեցրին 23-32 ամեն մի հաղարի վրայ : Յետոյ նըրա տնտեսական բարգաւաճ տարիներում 1884-1892ին, ծնունդների թիւը նորից սկսեց բարձրանալ մինչեւ 28 0/00-ով : Գաղով Ֆրանսիային , նախ պատերազմի ու ներքին կարճատեւ ապստամբութիւնը 1869-71 թ. , իջեցրին նրա ծնունդների թիւը 21-45 0/00 : Իսկ 1881-83 տարիներում ծնունդներն արդէն աւելացան 19-մինչեւ 28 0/00 : Բնակիչների այդ աւելացումը կը շարունակուէր կանոնաւոր կերպով , եթէ Ֆրանսիան չ'ենթարկուէր տնտեսական մի նոր գծրազոյթեան : Ինչպէս յայտնի է , ֆիլոսոֆիա կոչուած հիւանդութիւնը 1891-1892թ. բոլորովին ոչնչացրեց ֆրանսական խաղողէնիները : Վնասը հասաւ 3 միլիարտ ֆրանկի : Տնտեսական հարստութեան այս կորուստը ծնունդների թիւը իջեցրեց 43-մինչեւ 44ի՝ իւրաքանչիւր հաղար բնակիչի վրայ : Թւերը ուրիշ երկիրների վերաբերմամբ մասնանիջ են անում միեւնոյն երեւոյթը : Ասիայն եւ չեմ ուզում այդ թւերով յօգն'եցնել ընթեցողին : Իմ նպատակն է ծանօթացնել նրա խնդրին իսկութեան հետ՝ հիմնուելով մի քանի փաստերի վրայ : Միայն պէտք է կրկնեմ , որ ազգաբնակչութեան պակասումը ներկայումս մի ընդհանուր երեւոյթ է Եւրոպայում Գերմանիայում

եւ Անգլիայում բնակիչներն աւելանում են համեմատաբար աւելի քիչ քան ուրիշ ժամանակներ : Իսկ Ֆրանսիայում բնակիչները չեն պակասում : Այստեղ միայն աւելացում չկայ : Սոցա ազգաբնակչութիւնը անշարժ է , թէեւ վերջին վիճակագրութիւնը 1901 թ. ցոյց տուեց , որ նա աւելացել է մօտ 500,000 հոգով : Յամենայն պէս ազգաբնակչութեան խնդիրը պէտք է լուծում ստանայ ներկայումս եղող հասարակական պայմաններում : Միայն բան է խնդրի անբաւարար կերպարանքը միմիայն ազգային սովորութիւններին եւ յատկութիւններին վերագրելը : Եսկասկած մարդկանց կամքը եւ միւս ոգեկան յատկութիւնները կարող են շրջապատող իրերին նպաստակարմար ուղղութիւն տալ , բայց միջավայրն է ձեւակերպում մարդու կամքն ու նորա հոգեկան յատկութիւնները՝ առանց նրանից խելու իր բնածին ինքնուրոյնութիւնը : այնպէս որ սըխալ եւ անհիմն է պատասխանատու դարձնել Ֆրանսիայի ժողովրդական բարքերը մի երեւոյթի համար , որի մեկնութիւնը պէտք է հասարակական պայմաններում որոնել :

Եւրոպական հասարակութեան ուշքը ներկայումս շատ է գրաււած նաեւ այն յայտնի խնդրով , որ վերաբերում է երկրագործական տաղանային : Երկրագործութիւնը գահուում է նեղ վիճակի մէջ : Պարզեք խնդիրը : Ժողովուրդների աճումը պահանջեց երկրագործական արդիւնքների առատութիւն : Աւելացող պահանջին բաւարարութիւն տալու համար՝ պէտք էր ընդարձակել երկրագործութիւնը : Այս նպատակին չէին կարող ծառայել երկրագործական հին եղանակները : Անհրաժեշտ էին նոր գործիքներ : Սրանց ներմուծումն աւելի հեշտացրեց երկրագործական արդիւնաբերութեան գործը : Ֆիզիքական աշխատանքի տեղը , որ բազմաթիւ գիւղացիական ձեռք էր բանեցնում , բռնեցին մեքենաները : Սրանց օգնութեամբ երկրագործներն սկսեցին աւելի շատ արդիւնաբերել , քան թէ պահանջ կար : Ուստի եւ շուկաները արդիւնքներով լցուեցան : Յայտնի բան է , որ շատութեան պատճառով արդիւնքների գները ընկնելը անխուսափելի էր : Ի բաց առած մի քանի երջեմ ստիւիլի էր : Ի բաց առած մի քանի երջեմ ձեռնառ եւ առատ բերք ստացող երկիրներին , գները ընկնելը մշտական է դարձել : Հացհատիկների շատութիւնը սաստկացրեց մեր

ցումը եւ այս հանդամանքը զիւղացիները զը-
ցեց շատ նեղ դրութեան մէջ : Նրանք չէին
կարող ստոր գնելով ծախած արդիւնքների
եկամուտից թէ իրանք ապրել եւ թէ ծածկել
արած ծախսերը : Ճարա՛տտեալ նրանք պիտի
իրանց տակասը լրացնէին պարտքերով : Օ-
րէնքները զիւղացիներին թոյլ են տալիս զը-
բաւ գնել իրանց հողերը : Հեշտ է գրաւ դը-
նելը , բայց դժուար եւ անհնարին է լինում
գրաւ դրած հողը թափելը : Դրաւ դրած հո-
ղերի մեծ մասը ծախուում է աճուրդով եւ զիւ-
ղացիները հանդիսանում են միանգամայն զըր-
կւած իրանց հողային սեփականութիւնից : Սա
փաստ է : Միայն աւելի զարհուրելին այն է ,
որ զիւղացիները ալքատանալուց յետոյ՝ էլ չեն
մնում զիւղերում , որ սեղ երկրագործութիւնը
նրանց տարւայ մէջ մի քանի ամիս գործ է
տալիս , այլ զաղթում են քաղաքները մշտա-
կան գործ ճարելու նպատակով : Այնտեղ նը-
րանք ամենից առաջ խտացնում են եղած բան-
ւոր պրոլետարիատի շարքերը : Ապա զիւ-
ղում ապրող մարդը զրկուում է այն առաւե-
լութիւնից , որ բացօդեայ կեանքը աալիս էր
նրան : Նա ընկնում է ֆիզիքայէս եւ բարո-
յայէս : Նրա ոգեկան աշխարհն էլ այլանդակ-
ւում է : Նա զոհ է գնում այն արտոտ կեան-
քին , որ ստեղծել են քաղաքային բանւոր
դասակարգի գոյութեան պայմանները : Նա
թշնամանում է շրջապատող դրութեան դէմ :
Նա դառնում է անընդունակ բարձր իտէալ
պահպանելու իր որտում դէպի որ եւ է նւի-
րական գործ : Ու այսպիսով քաղաքները մե-
ծանում են անընդհատ եւ թանգացնում ապ-
րուստը : Առհասարակ քաղաքները զաղթող
մարդիկ հիասթափուում են , երբ չեն կարողա-
նում իրանց աշխատանքով ապրել այն կերպ ,
ինչպէս սովոր էին ապրելու իրանց բնակա-
վայրում : Յամենայն դէպս այդ երեւոյթի վերջ-
նական հետեւանքները կորստաբեր են : Պե-
տութիւնները ստիպուում են դիմելու զանազան
միջոցների , որոնք հիմնաւոր եւ արմատական
չը լինելու պատճառով , մնում են ապարդիւն :
Վերցնենք հէնց օրինակ հովանաւորող մաքսե-
րի գործադրութիւնը : Կարծում են , որ բոլոր
վնասը առաջ է դալիս օտարերկրեայ արդիւնք-
ների մրցումից : Ու որպէս զի արտաքին մըր-
ցումը չէր քանայ եւ մայրենի արդիւնքները
զերծ միան նրանից , հովանաւորող մաքսեր են
դնում ներմուծող երկրագործական արդիւնք-

ների վրայ : Հասնո՞ւմ են արդեօք զրանով ա-
ռաջադրած նպատակին : Փաստերը վկայում են ,
որ գործ դրած միջոցների տւած օգուտը չնչին
է : Նախ մաքսերից որոշ ժամանակ օգուտւմ
են խոշոր հողատէրերը եւ շարչիները : Նա-
մանաւանգ վերջիները իջեցնում եւ բարձրա-
ցնում են հացհատիկների գները կամայականա-
բար , օգուտելով նպաստաւոր հանգամանքներից :
Հարկաւ խոշոր հողատէրերն իրանց արդիւնք-
ներով իշխում են շուկաներում , որոնք սկզ-
բում ազատ են լինում օտար մրցումից : Բայց
հաղորդակցութեան միջոցների կատարելա-
գործութիւնը այնտեղ իջեցնում է հացհատիկ-
ների ճանապարհածախսը եւ հովանաւորող մա-
քսերը դարձնում է անզօր եւ անպէտք : 1901
թ. մի կինսալ ցորենի ճանապարհածախսը
Լօնդօնից մինչեւ Փարիզ նստում է 1,50 ֆրանկ :
Մի կինտալ 1) ներմուծող ցորենի վրայ 7 ֆը-
րանկ հովանաւորող մաքս է դրած , այնպէս որ
Պարիզում այդ ցորենը պիտի արժենայ իր իս-
կական գնից 8,50 ֆրանկ աւելի : Ու չը նա-
յած այսքան մեծ մաքսին , Լօնտօնի եւ Պարիզի
գների մէջ տարբերութիւնը լինում է 1,50 ֆը-
րանկ , այսինքն Լօնտօնի ցորենը Պարիզում
1,50 ֆրանկ միայն աւելի արժէ : Բայց երբ
մեծ է ցորենի պահանջը , այն ժամանակ այդ
զանազանութիւնն էլ կորցնում է իր նշանա-
կութիւնը եւ ապրանքն էլ մեծ քանակութեամբ
մանում է Ֆրանսիա : Օրէնադրութիւնները
հացհատիկների առեւտրի վերաբերմամբ փոփո-
խական են : Նրանք մերթ բարձրացնում եւ
մերթ իջեցնում են մաքսը , յարմարուելով տա-
րաշխարհիկ շուկաներում առաջ եկող նոր
պայմաններին : Այդ փոփոխութիւնից ամենից
շատ օգուտւմ է շարչիութիւնը , որ կապիտա-
լիստ հասարակութեան ծնունդն է : Սա մեծա-
մեծ վնասներ է հասցնում թէ արդիւնաբերող-
ներին եւ թէ սպառող հասարակութեանը , պա-
կսեցնելով գները՝ ապրանքը արժան առնելու
համար , եւ աւելացնելով՝ թանգ ծախելու նպա-
տակով : Կապիտալիստ հասարակ լթեան այս
զղուելի վէրքի դէմ կուելու միջոցները պէտք
է խտանան մի օր : Ճաւը կը վերանայ , երբ
արդիւնաբերութեան տիրող պայմանները վե-
րափոխուելով՝ ընդունակ դառնան արմատից
կտրելու շարչիութեան աւելի մեքենայու-
թիւնները : 1898 թ . ամբողջ աշխարհի ցորենի

1) Ռուսաց 5 պուդ , այսինքն 80 քիլօ :

արդիւնաբերութիւնը հասել էր 1 միլիարդ 55 միլիոն հեկտոյիտրի : Մի թիւ , որ Եւրոպայում մեծ առեւտրի գործ է դարձել : Այսքան արդիւնքի մաքսային կապանքներից ազատ առեւտուրը արդարեւ կարող է թեթեւացնել սպառող հասարակութեան ապրուստը : Դրանով նամանաւանդ կը թեթեւանայ քաղաքներում ապրող շուկաները դասակարգի ծախսերը : Այնու ամենայնիւ ցաւալի եւ հիասթափեցնող հանգամանքը այն է , որ ոչ ցորենի ազատ առեւտուրը եւ ոչ էլ յիշած կերպի մաքսերը գիւղացիութեան չեն փրկում սեփհականութիւն կորցնելուց : Ցաւն օրգանական է եւ ոչ պատահական , ուստի սրա դէմ գործ դրած միջոցներն եւս պիտի արմատական լինին : Այս է կենտրոնակէտը երկրագործական փառնապի խնդրում , որն ահա կէս դարից աւելի է որ քրոնիկական բնաւորութիւն է ստացել : Եւրոպայի ընդհանուր ուշադրութիւնը ներկայումս շատ լարւած է այդ խնդրի վրայ եւ դեռ եւս չեն կարողացել մի ելք գտնել գիւղական ազգաբնակչութիւնը քայքայող այդ կորստի դէմ : Տեսէք թէ , օրինակ , որքան է աւելացել աճուրդով ծախուող հողերի թիւը Ֆրանսիայում—1878 մինչեւ 1890ը , այսինքն 12 տարւայ ընթացքում : 1878 թ. -1370 վաճառում է եղել , մինչդեռ 1890 թ. վաճառումների թիւն արդէն հասնում է 13,944-ի : Ծախուող գիւղական հողերի այսօրինակ արագընթաց աճումը ապացուցում է , որ գիւղացիութիւնը աստիճանաբար զրկուում է իր հողային սեփհականութիւնից եւ ճարահատուած սկսում քաղաքային պրոլետարիատի կեանքը վաշել : Մի՞թէ այս երեւոյթը վնասեցուցիչ չը պիտի լինի ֆրանսիացու համար :

Գերմանիայում դրութիւնը աւելի եւս վատթար է : Գիւղական հողերը ամենուրեք յանձնուում են գրամատէրների ձեռքը : Վերջին 20 տարւայ ընթացքում արժէթղթերը անհաստատ են դարձել եւ ենթակայ են զանազան կորստաբեր փորձանքների : Դրամատէրները արժէթղթերի փոխանակ իրանց փողերով գիւղական հողեր են գնում կատարելագործւած ձեւերով գիւղատնտեսութեամբ պարապելու համար : Այն հողերը , որ ֆրանսիայում 1880 թ. տւել են հարիւր միլիոն հեկտոյիտր ցորեն , իրանց արդիւնքը 1890ին հասցրել են , խոշոր հողագործութեան շնորհով : 122 միլիոն հեկտուլիտրի , թէ ինչ կերպարանք կ'ստանայ ապա-

պայում դեռ եւս նոր երեւոյթ կազմող խոշոր հողատէրութեան վիճակը , այդ մասին դեռ եւս չառաջ են վիճում : Սարսափ յարուցանող խնդիրն այն է՝ թէ ինչ միջոցներով պիտի կուել քաղաքները դաղթող հոսանքի դէմ , որ լեգէոններ է կազմում : Մի ժամանակ շատ գոված գիւղական վարկը իր բոլոր սովորական ձեւերով այլ եւս անընդունակ է գիւղացուն կորստից փրկելու : Փոխառութեան այդ նախած ձեւերով մանր հողագործներն անզօր են խոշոր հողագործների հետ կոխ մղելու : Հետեւաբար մանր հողագործութեան ստղնապը բաւականին մեծ է : Եւրոպական հասարակութեան նա զգացնել է աւելի , որ ցաւը խոր արմատ է գցել տնտեսական կազմի մէջ : Միւս կողմից գիւղից եկած մշակ մարդիկ սկսում են մրցել քաղաքային բանւորներին հետ , ուստի վարձագրինը պէտք է անպայման ընկնի : Բանւորները դժգոհում են ընկած վարձագրից , որ բաւական չէ նրանց ամենակարեւոր ապրուստի պէտքերը հողալու : Վերջ ի վերջոյ առաջ է զալիս գործազուլը : Թէեւ այս ձեւի բողոքը մի գեղեցիկ ապացոյց է տնտեսական պայմանների այլանդակութեան , բայց եւ այնպէս գործադուլից ամենից առաջ նիւթապէս օգտուում են դարձեալ նոյն գործարանատէրերը : Սրանք գործադուլի ժամանակ սաղացնում են իրանց աւելորդ ապրանքները , որոնք չէին ծախուում : Ինն տարուայ ընթացքում , 1890-99 թ. , միայն ֆրանսիայում 4,210 գործադուլ է եղել , որին մասնակցել են 924,476 բանւոր : Գործադուլը տանելի է թերեւս , բայց ինչ կասէք այն բանւորների զրութեան մասին , որոնք յաճախ բոլորովին անզօր են մնում : Սա մի նոր խնդիր է , որ առիթ է տալիս մըտածելու , թէ արդեօ՞ք ներկայ աշխատանքի ձեւը չէ հնացել եւ անպէտքացել : Սրանից 30 տարի առաջ անգործութիւնը մի անցողական երեւոյթ էր : Ներկայումս նա մշտական է դառել , նոյնպէս իր լուծումն է պահանջում : Եւրոպայում տարւայ կրեք կամ չորս ամիսը բանւորների մի որոշ մասը պարապ է մնում եւ գործ չի գտնում : Նման դրութիւնը երբ կրկնուում է : Բանւորներին ընտելացնում է թափառաշրջութեան , այստեղից այնտեղ գնալուն , որ շատ անգամ նպաստում է յանցաւորների թւի բազմանալուն : Շատանաւոր մի քանի օրինակներով : Ֆրանսիայում 1896 թ. մարտ աշին երկու սեռի անզօր մնացածների թի-

ւը 269,600 էր : Սրանց անգործութիւնը տարւայ մէջ միջին թւով տեւել է երկու ամիս : Պրուսիայում 1895 թ. դեկտեմբեր ամսին անգործ էին մնացել 553,676 բանուոր երկու սեփից եւ տարւայ ընթացքում երեք ամիս շարունակ : Թւերը շատ չօշափելի են նաեւ Անգլիայի վերաբերմամբ : Որովհետեւ անգործութիւնը հետզհետէ ծաւալուում է, հարց են բարձրացնում մասնուէր մէջ թէ ի՞նչ է այս նոր երեւոյթի պատճառը : Մինչեւ այժմ ամենքից խելացի եւ դրական պատասխան՝ գոյութիւն ունեցող բանուորական ընկերութիւններն են աւել : Սրանք միաձայն այդ երեւոյթը վերագրում են մեքենաների ներմուծման , որոնք վաճառեցին ձեռքի աշխատութիւնը եւ նրա տրւին այնպիսի կերպարանք , որ ներկայումս անգործութեան են մատնում բազմաթիւ մշակ մարդիկ : Մեքենայական աշխատանքը անդէն է դարձնում բանուորներին : Եթէ պայմանները չը փոխւին խնդրին լուծումն ապու համար , այն ժամանակ ճիշտ է երեւակայել թէ ինչ մեծ վտանգ կը ներկայացնի հասարակութիւնների համար բազմաթիւ անգործ բանուորների կուտակումը : Մեքենայական արդիւնաբերութիւնը գրեթէ ապշեցնում է իր գործերով : Հիւսիսային Ամերիկայում 10-15 տարի առաջ 3 բանուոր 236 ժամայ մէջ 20 տողար ծախսով պատրաստում էին 20,000 մետր : Այսօր նոյն ապրանքի քանակութիւնը պատրաստում է մեքենան 1,49 ժամում , 0,29 դողար ծախսով : Ստացած օգուտը երկու տեսակ է : Նախ ժամանակի խնայողութիւնը , եւ ապա նրա հետ միասին մեծ վաստակ արդիւնագործողի համար : Ուր որ մեքենայական աշխատանքը մուտք է գործել , այնտեղ նրա բերած օգուտը արդիւնագործողին է պատկանում ոչ բանուորին : 1861 մինչեւ 1881 թ. , այսքան տարում մօտ մէկ միլիոն բանուոր մնացել են անգործ , որովհետեւ մեքենան բռնել է սրանց տեղը : Անգլիական 17 կարգի գործարաններում 1861 թ. բանել են 3,912,138 բանուոր : Տաս տարի յետոյ , այսինքն 1871 թ. արդիւնաբերութեան նոյն 17 ճիւղում բանել են 3,393,902 բանուոր , այսինքն 518,000 մարդ անգործ մնացել են զուրսը մեքենաների պատճառով : Չէ՞ որ փաստերը բաւականին ազդեցիկ են հասարակութիւններին յիշեցնելու համար թէ նրանք պարտաւոր են վերափոխել աշխատանքի պայմաններ : Եթէ տէրութիւններն աշխատում են ապա-

հովել գործ ունեցող բանուորներին , ինչո՞ւ չպիտի միջոցներ որոնեն անգործ բանուորներին եւս ապահովելու համար :
 — Ես կարծում եմ , որ ընթերցողը մասնաւորապէս ծանօթացաւ մի քանի խոշոր հասարակական խնդիրների հետ , որոնք վերջին քսան տարուայ ընթացքում սուր կերպարանք են ստացել Եւրոպայում : Հետաքրքրական խնդիրներ շատ կան , բայց մեր յիշածները այն խնդիրներիցն են , որոնց լուծումը պիտի ապագայում կերպարանափոխէ եւրոպական հասարակութիւնը : Յաճախ արտայայտուող այս կարծիքը իբր թէ Եւրոպայում ամէն ինչ բարգաւաճ դրութեան է հասել , սխալ է միանգամայն : Իրաւ է , արդիւնաբերութիւնը արել է ահադին յառաջադիմութիւն : Պարիզի 1900 թ. ցուցահանդէսը աշխարհս զարմացրեց եւ հիացրեց Ֆրանսայի , Անգլիայի եւ Գերմանիայի եւ Ամերիկայի գործերով ու արուեստներով : Մտաւոր կողմից եւս ամենքը մեծամեծ քայլեր են արել : Բարբքը այդ կողմից անվիճելի է : Սակայն հասարակութեան որոշ դասակարգերն են միայն առաւելապէս օգտուել այդ բարբքից : Ունեւոր կամ իշխող դասակարգերն անընդհատ հարստացել են : Ազգաբնակչութեան հպատակ եւ չունեւոր մասն ընդհակառակն շարունակում է տակաւին դեղերի զրկանքներու մէջ : Մարդկանց այդ դասը բազմացել է թէ զիւղից գաղթողներով եւ թէ անգործ ուսում առածներով : Մի խօսքով պրոլետարիատն ամենուրեք խտացել է եւ խտալ յիշեցնում է , որ դասակարգերի մէջ եղած յարաբերութիւնները լարում եւ վատթարանում են , փոխանակ լաւանալու : Մի ժամանակ երբ որ խնդիրները գեո չէին հասել զարգացման այս աստիճանին Եւրոպան երբեմնապէս ոգեւորուում էր ամէն մի արդար գործի համար : Նա իւր արիւնը չէր խնայում արդարութիւնը վերականգնելու , երբ նա խախտուած էր լինում : Նա պաշտպանում էր թոյլին եւ փրկում կորստից . ամէն մի անիրաւութիւն որ կատարւում էր Եւրոպայից գուրս , անպատիժ չէր մնում . այդ ժամանակն անցել է արդէն : Հիմա Եւրոպան ետսէր եւ նիւթապաշտ է : Նա , կարծես , հեռացել է իտէալներից . նա դառել է երկչոտ կատարելու համար մի գործ՝ ընդունակ նորից վերականգնելու լուսաւորութեան վարկը , որ արդէն սկսել է ընկնիլ բազմաթիւ որոշ ազգերի աչքում : Նա նւաճումներ է անում շահագործելու դիտաւո-

րու թեամբ, ա՛յնքան կաշկանդեւ է ազանու-
թիւնից ձ հայց մեծ յոյս կայ, որ մօտիկ ապա-
գայում ժողովուրդների ինքնաճանաչութիւնը
յառաջ կը բերի պայմանների մի նոր գասաու-
րութիւն, որտեղ արդար դործը միշտ իր լու-
ծումը կը ստանայ: Ոչ մի բռնութիւն չի կարող
այս ինքնաճանաչող ընթացքին հակառակելը,
որովհետեւ սա է ժողովրդական հողերանութեան
օրէնքը:

Պարիզ

ԳՐԻԴՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՀԻՑԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻԻ

Գ. Պ Ր Ա Ն Տ Է Ս Ի

Մայիս 19ի իրիկունը, Փարիզի գրական քըն-
նադատներու ընկերակցութիւնը հացկեթոյթ մը
տուաւ Մարիլըրի ճաշարանին մէջ ի պատիւ տա-
նիմարքացի աշխարհահռչակ քննադատ Գէորգ
Պրանտէսին, որ անվիճելի կերպով ամենամեծ
քննադատն է որ Եւրոպայի մէջ կրեցած է
Իփիգոլիթ Իէնէն ի վեր:

Ներկայ էին հարիւրի չափ դրագէտներ, ա-
րուեստագէտներ, քննադատներ եւ ուսու-
ցիչներ, մեծ մասամբ օտարազգի, — տանիմար-
քացի, ֆինլանտացի, շուէտացի, իտալացի,
ռուս, հայ, եւն: Յրանսական գրականութեան
ու քննադատութեան ներկայացուցիչներէն
չատ քիչեր կային — Կասթոն Տէշան, Տիկին
Սեվրին, Փիէր Քիլեար, Լուի Տիւմիւր, Հանրի
Պարպիւս, եւն:

Պ Կասթոն Տէշան, որ կը նախապահէր, յա-
նուն ֆրանսական քննադատութեան ողջունեց
Պրանտէսը եւ յայտնեց անոր իր ֆրանսացի
եզրայրակիցներուն հիացումը. պ. Սեմենոֆ խօ-
սեցաւ յանուն ռուս գրականութեան եւ Պրան-
տէսի գործին ազդեցութիւնը ի վեր հանեց հիւ-
սիսային գրականութեանց վրայ. պ. Մասսէն,
Տանիմարքացի, Դանիոյ գրական նոր սերուն-
դին երախտագիտութիւնը եւ սքանչացումը
յայտնեց. պ. Չօպանեան խօսեցաւ յանուն հայ
գրականութեան:

Տիկին Սեվրին, յանուն ֆրանսացի կրին-
րուն, արտասանեց հոյակապ բաժակածառ մը,
ներբողելով աշխարհաչափաքացի ողին. ազդե-
րու միջեւ պտտուարները քանդող այսպիսի
գումարումներու օգտակարութիւնը գովեց, եւ
յայտարարեց թէ Ֆրանսան իբրեւ ազգակից ու
արիւնակից պէտք է համարի (ինչպէս երբեմն)
բոլոր այն ազգերը որ կը տառապին ու բոլոր

այն տաղանդները՝ ինչ ցեղէ ալ ըլլան՝ որ
նոր գեղեցկութիւն մը կը բերին աշխարհիս:
Սրամիտ թօսով մը, Պրանտէս իր շնորհա-
կալութիւնն յայտնեց ու արդի քննադատութեան
գերն ու ճակատադիրը բացատրեց:

Ահա բաժակածառը զոր արասանեց «Ա-
նահիտ»-ի տնօրէնը:

« Ս Ի Ր Ե Լ Ի Վ արպետ »

«Դուք մին եղած էք այն թանկագին մտքե-
րէն որոնք յաղթականօրէն ապացուցին ան-
ճըշգու թիւնը հին առածին՝ «քննադատութիւնը
զիւրիկն է, արուեստն է դժուար», առած որ յա-
ցուած է տյնպիսի ժամանակներում երբ քըն-
նադատութիւնն ուրիշ բանի մէջ չէր կայա-
նար յայց եթէ դատելու թէ գործը կանոննե-
րուն համաձայն է կամ ոչ: Թ. եւ Թ. Գարիբը,
զորոնք կարելի է «քննադատութեան դարեր»
անուանել՝ այդ բառին ամենալայն իմաստովը՝
քննադատութիւնը արուեստի մը աստիճանին
բարձրացուցին: Քննադատը ստեղծողներու
գործին տեսակ մը մակաբոյժն ըլլալէ զայրե-
ցաւ. ստեղծող մը դարձաւ. ինք ալ կատուցա-
նելով գործ մը որոշապէս անձնական որ ինք
իրմով կ'ապրի, որ ինքնուրոյն արժէք մը եւ
նշանակութիւն մ'ունի, սա միակ տարբերու-
թեամբ որ արուեստագէտը կամ գրագէտն իր
գործին համար իբր նախանիւթ կ'առնէ բնա-
կան կեանքը՝ այնպէս ինչպէս իրերու տրա-
մաբանութիւնը զայն կը յօրինէ, մինչդեռ քըն-
նադատն իր գործին համար իբր նախանիւթ
կ'առնէ մտաւոր կեանքը որ արուեստագէտնե-
րու հողիին ու իրականութեան բաղխումէն կը
ժայթքի: Չեր «Թ. Գարու գրական մեծ հո-
սանքներ»ը, սիրելի վարպետ, ճշմարիտ դիւ-
ցազներգութիւն մըն են, ուր գաղափարներու,
ձգտումներու, անհատական կամ հաւաքական
հոգեբանութիւններու պայքարն է որ գործողու-
թիւնը կը կազմէ եւ ուր ստեղծագործ հան-
ճարներն են որ հերոսները կը ձեւացնեն:

«Նոր ժամանակներու մտքին ամենէն կարեւոր
եւ ամենէն յատկանշական արտայայտութիւն-
ներէն մին է ուրեմն որ կը տօնուի այս մեծա-
րանքին մէջ զոր ֆրանսական քննադատութեան
վարպետները կը մատուցանեն ձեր գործին:

«Բոլոր քաղաքակիրթ ժողովուրդները մտքով
կը մասնակցին այս իրիկուն, վստահ եմ, այս
մեծարանքին, որովհետեւ ձեր գործը բովան-
դակ խորհող մարդկութիւնը կ'ընդգրկէ. ճըշ-
մարիտ «աշխարհաքաղաքացի» գութ հասկցած
ու թարգմանած էք Գեղեցկութիւնը՝ ամէն ուր
որ զայն գտած էք, առանց որ ձեր անողութիւնը
բնաւ երբեք պղտորուէր ցեղերու տարբերու-
թիւններէն կամ երկիրներու եւ դարերու հեռա-
ւորութենէն Ասիից դատ՝ դուք արժանի էք բո-
լոր մարդոց երախտագիտութիւնը վայելելու, ոչ
միայն որովհետեւ ըմբռնած էք ինչ որ կայ
ազնիւ ու բարձր բոլոր ցեղերու գեղեց-

կազմակերպող թիւերն մէջ, այլ մասնաւոր որովհետեւ ձեր մտքին լոյսը սեւեռած էք այնքան ընկերական հարցերուն որքան գեղեցկապիտական հարցերուն վրայ, անոնց յարակցութիւնը ցոյց տուած, զանոնք իրարմով լուսաւորած էք: զուք ապացուցած էք որ եթէ արուեստը անհրաժեշտ բարիք մը, նուիրական հաց մըն է մարդկային ընկերութեան համար, ընկերական պայմաններու բարելաւումը. նախապաշարութեան, մօլորանդութիւններու, հինաւուրց անասնականութեան բոլոր մնացորդներուն քանդումը, ամբողջապէս ազատագրուած մարդկութեան մը հիմնարկումը՝ գերազոյն նպատակն են ճշմարիտ Արուեստին ու անոր ամենէն լիակատար ու ամենէն վեհ փթթումին անհրաժեշտ պայմանը: Հետեւ անանձնական մեկնաբան մ'ըլլալէ, զուք ձեր գործին իւրաքանչիւր էջին մէջ յայտնած էք հզօրասլան անհատական հոգի մը, որուն ինքնութիւնը հաստատած ու ճշդած էք ջերմ նախասիրութեամբ զոր ընծայած էք այն հանձարներուն որոնք իրենց հոգեկան ուժը մարդկութիւնն աւելի բարձր, աւելի բարձր, աւելի ազնիւ ընելու գործածած են: Դուք հոյակապօրէն երգած էք այն մոգական կերպարանափոխութիւնը զոր անխարհիս մէջ կարող է բերել ստեղծագործ մեծ մտքերուն վերանորոգիչ կամքը: զուք փառաբանած էք մարդկային կորուրձ՝ մեծ անհատականութիւններուն մէջ յայտնուած:

«Ձեզի պէս միտք մը չէր կրնար գուտ ուղեղային գործունէութեան մը մէջ սահմանափակուիլ: զուք յաճախ զուրս ելաք գաղափարներու աշխարհէն՝ ձեր շուրջը նուազող ընկերական կեանքին խառնուելու եւ արգար դատերուն յաղթանակին ի նպաստ մղուած պայքարին մասնակցելու համար: Ձեր ամբողջ կեանքը Գեղեցկութիւնը տարփողելու նուիրուած ըլլալով, չէիք կրնար հզօր ու ցաւազին ատելութիւն մը չզգալ քաղաքական ու ընկերական կեանքի մեծ տղեղութիւններուն, հրէշային զուեւրութիւններուն հանդէպ: Երբ ահռելի ջարդեր Հայաստանն արիւնոտեցին, զուք Եւրոպայի մէջ առաջիններէն եղաք՝ զայրոյթի եւ պիտանքի աղաղակ մ'ա՛ծակող: զեռ քանի մ'ամիս առաջ, Պերլինեան հասարակութիւնը կը սարսուտացնէիք նոյն նիւթին վրայ խօսելով, Այնքան սրտով որքան մտքով մեծ մարդու մըն է որ այս իրիկուն Փարիզ յարգանքի հարկ մը կը հատուցանէ: Ուրախ եմ կարենալուս անոր մասնակցել, ու ձեզի յայտնել, սիրելի վարպետ, իմ ջերմեանդ հիացումն ու իբր Հայ երախտագիտութիւնս:»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս վերջերս մեր ստացած մէկ քանի նամակներէն կ'արտատպենք հետեւեալ հատուածներ, որոնք կը պարունակեն շահեկան թելադրութիւններ: Երատարակուելով՝ թերեւս անոնք արձագանք գտնեն մեր հասարակութեան մէջ: Թերեւս գտնուին անձեր կամ խումբեր որոնք այդ ուրուագծուած ծրարները մարմնացնելու կամ արդէն իրագործուիլ սկսած գաղափարները զարգացնելու ջանադիր ըլլան:

Թեհրանէն, պ. Տիգրան Զաւէն կը գրէ «Մտօրէն Թեհրանի մէջ պիտի բանանք 2000 թուման զրամագլխով եւ իւրաքանչիւր բաժնեգրինը 20 թուման արժէքով բաժնետիրական գրքատուն մը, որ առաջինը պիտի ըլլայ ամբողջ Պարսկաստանի մէջ: Յաջողութեան պարագային մէջ, — եւ մենք կ'սկսած շուկինք որ կը յաջողուի, — զրամագլուխը պիտի կրնանք ու եռապատկենք: Դործը, թէ՛ նիւթապէս եւ թէ՛ մանաւանդ բարոյապէս, ահագին օգտակարութիւն պիտի ունենայ: Բաժնեգրիները գրեթէ ծախուած են եւ ամսե մը կը գումարենք ընդհանուր ժողով՝ որոշելու համար զրատան ապագայ գործունէութեան ուղղութիւնն ու ծրարագիրը: Բաժնէտիրական ընկերութեամբ հաստատուած է արդէն Թեհրանի մէջ տպարան մը. «Փարոս», որ շատ յաջող կ'ընթանայ: Տարի մըն է հաստատուած է, եւ հարիւրին երեսուն շահ բերու: Բաժնետիրական ընկերութեամբ գործի ձեռնարկները Պարսկաստանի, մանաւանդ Թեհրանի մէջ, մեծ յաջողութիւն գտած են: Դիտաւորութիւն կայ բաժնետիրական ընկերութեամբ բանալ նաեւ հիւանդութեան կատարելագործուած արհեստանոց մը եւ թերեւս կօշկակարութեան արհեստանոց մըն ալ, որոնք նիւթապէս անհուն բարիք մը պիտի ըլլան Թեհրանցիներուն, այլ եւ մանաւանդ դիւրութիւն պիտի ընծայեն արհեստներ ծաղկեցնել Հայերու մէջ, բա՛ն մը որուն պէտք է ձգտինք ամէն տեղ, Պարսկաստանի ինչպէ՞տ Թուրքիոյ մէջ: Մեր ժողովուրդը անտեսապէս ապահով հիւքերու վրայ դնելու ասկէ աւելի գեղեցիկ միջոց չկայ: Այս մտքով պէտք է խօսիլ ու գրել միշտ: Թուրքիոյ մէջ որքանոցները պէտք է փոխուին արհեստանոցներու. անհրաժեշտ է քաջաբերել այս միտքը: ... Դալով մեր հաստատելիք գրատան, անիկա գլխաւոր օժանդակ է եւ լրացուցիչը պիտի ըլլայ «Փարոս» տըպարանին, ուր պիտի կարենանք տպել տալ՝ զրատան հաշուին՝ թարգմանական ինչպէս հեղինակական գործեր:»

Թղթակից մը կը գրէ Գէֆթաունէն (Cape-town) .

«Այստեղ գործելը շատ լաւ են թէ վաճառականութեան, թէ ամէն արհեստներու եւ թէ speculationի մէջ : Զոր օրինակ՝ գարծուներայ լեզուադէտ եւ քիչ շատ ստակ ունեցող մարդիկ վաճառականութեամբ կամ պղտիկ դըրամագլխով խանութպանութեամբ շատ զրամ կրնան շահիլ հոս, որովհետեւ բոլոր ապրանքները եւրոպայի գնոյն երեք անգամովը կը ծախուին սակալ, ու Փարիզի պոնմարչներուն պէս մեծ խանութներ ալ շատ չկան :

«Speculationի մէջ, հող եւ տուն մէկ ձեռքէ առնելով եւ միւս ձեռքէ գրեթէ կրկին գինով ծախելով, շատ Հրեաներ մեծ գումարներու տէր եղած են :

«Դալով արհեստներու, անպլիներէն գիտցող եւ քիչ մը ստակ ունեցող մարդոց համար մեծ ապագայ կայ, — ինչպէս նաեւ Փարիզէն վըրկայական ստացած բժիշկներու համար :

«Ֆրանսական ձեռով շապիկ չինող ու գերձակ՝ այս մեծ քաղաքին մէջ մէկ հաս կայ միայն եւ անագին ստակ կը շահի : Եոյնպէս շատ քիչ են ճարտարագետներ, մինչդեռ պէտք շատ կայ . բազմաթիւ նոր տուներ կը շինուին : Դեռ քիչ են նաեւ ժամագործներ, ոսկերիչներ, սաճկական ու եգիպտական սիկարէթ շինողներ, եւն :

«Անգլիական կառավարութիւնը շատ մը գաղթական Հրեաներու, նոյպէս ուրիշ այլ եւ այլ ազգէ գաղթականներու՝ ներսերը հող տըւած է, որոնց շատերը այդ հողերուն վրայ տուն շինելով ծախած ու մեծ գումարներու տէր եղած են, եւ ոմանք ալ աղարակատէր են եղած : Միթէ կարելի չէ՞ քանի մը հարիւր գաւառացի Հայեր հոտ բերել տալ ու հողի տէր ընել իբր աղարակապետ : ասոր համար պէտք է Անգլիոյ կառավարութեան զիմել, եւ հաւանական է որ չմերժուի Հայոց այս խնդիրքը :»

Մեր թղթակցին այս առաջարկութեան վըրայ ուշադրութիւնը կը հրաւիրենք ամեն աւոնց որ Կովկասի հայ գաղթականներուն ախուր կացութեանը զարման մը կը փնտոեն ու զեռ չեն գտած : Անոնց հարցին լուծումը՝ մասամբ այս թելադրութեան իրագործումով կատարուի թերեւս :

Անպլիային, բարեկամ մը մեղի կը գրէ .


«Որքանոցներէ ելլող տղաքը ի՞նչ պիտի ընենք : Ահա մեծ խնդիր մը : — Վաճառականական դարն է հիմա : Սրտածման եւ ներածման համար հիմա կ'ըլլան հակառակութիւններ եւ պատերազմներ :

«Վաճառականական դաշնագրեր, վաճառականական նախարարներ ու հիւպատոսներ են որ դարս ստեղծած են : Պէտք չէ՞ որ Հայերը շա-

հարածնով ընկերութիւն մը կազմեն իրենց ցարդ անծանօթ մնացած մեծ հրապարակներն ալ տանելու համար իրենց ծանօթ վաճառականական ճարտար գործունէութիւնը : Այսպիսի հաստատութեան մը մէջ մըցողական քընտրութեամբ կրնան մտնել իբր աշկերտ՝ որքանոցներէ ելլող տղաքը : 100,000 ոսկի պէտք է ըլլայ զրամագլուխը, որուն կէսը նախ վճարուի : Անգլիոյ մէջ այլ եւ այլ կրօնական յարանուանութեանց պահանջող հասարակութիւնները (ոչ պետական եկեղեցիէն) «Բսանբորդ գարու Հանգանակութիւն» անունով զըրամներ հաւաքեցին վերջերս . Wesleyan methodistները՝ մէկ միլիոն անգլ. ոսկի, congregationistները՝ 500,000 անգլ. ոսկի՝ իրենց հասարակութեան կարեւոր պէտքերուն ծառայեցնելու նպատակով : Մեզի համար այսպիսի դումար մը, որ մխտուելու կամ կորսուելու վտանդին ենթակայ չէ՞ քանի որ փորձառու վաճառականներ գլուխ պիտի ըլլան, շատ զժուար չի կրնար ըլլալ հաւաքել : Ռուսահայք ալ անշուշտ կը մասնակցին : Կ'երեւակայեմ որ երեք վաստակի հայ վաճառականներու անուններ՝ այսպիսի ձեռնարկի մը զլուխը բաւական ըլլալու են ամէն կասկած հեռացնելու :

«Շահին կէսը միայն բաժնուելու է բաժնետէրերուն, իսկ մնացած կէսին 1/3 ը պահեստի գումար ըլլալու է անձեռնմխելի . 1/3 ը կըրթական եւ նախապատրաստական նպատակի յատկացուելու է, եւ 1/3 ը վարիչներուն իբր պարգեւ : Բաժինները չպիտի ծախուին մինչեւ 10 տարի :

«Ըստ իս, այսպիսի շահակցական ընկերութիւն մը՝ նիւթական օգուտներէն զատ՝ Հայերու համար պիտի ըլլար վարժութիւն մը գործակցական ձեռնարկներու եւ պիտի ծառայէր միախումբ ու համերաշխ մարմին մը կազմելու որ կրնար աղաղային խմոր մը կազմել աւելի ընդարձակ գործունէութեան : Նիւթական գործունէութեան հիմին վրայ թերեւս աւելի դիւրին ըլլայ բարձրացնել բարոյակաւոր ու մասուորականը, քան թէ հակառակը : Արդէն այս հաստատութեան նպատակը պիտի ըլլայ երկուքը զուգակցել : Ասոր մէջ հասունացողները Բարլայլի անուանած captain of industry կամ captain of commerceներէն պիտի ըլլան, զոյգ՝ մշակեալ գիտակից ընկերական մարդու հետ . մէկ իօսքով՝ կարապետ Բարակեղեաններ պիտի ըլլան, որ Գոլրիճ, Բարլայլ, Քոնթ կը կարգար եւ կը հոսկնար, մեծ վաճառականական տուն մը հիմնեց, Հնդկաստան պիտի ճիւղ բանար եւ գրեթէ լմնցուցած էր հայ զրամատունի մը եւ հայ վաճառականական զպրոցի մը իրագործումը, երբ մահը վրայ հասաւ :»



ՔՐՈՆԻԿ

ՁԵՅԹՈՒՆԻ ՈՐԲԵՐՈՒՆ Ի ՆՊՍՍ ՆԱԿՈՒԹԻՒՆ Ը — Վստմապուհ քանանան ընդունած է մինչև ցարդ հետեւեալ գումարները, որոնց մէջ կը գտնուին նաեւ Չատկի օրը մատուցին մէջ հաւաքուած նուիրատու թիւները .

Տ. Վստմապուհ քանանայ Բիպարեան, 10 Փ. Տիգրան խան Գէլեկեան, 50. Խմբագրութիւն «Անահիտ» ի. 10. Օ. Բ., 10. Հայ մը, 100. Երկու ազգայիններ, 20. Պուլկարեայէն ազգային մը, 20. Հայ մը, 50. Տիկին Պ., 20. պ. Ս. Ներսէսեան, 50. Ա., 20. Տիկին մը, 12. Ոմն, 20. Տիկին մը, 20. Տիկին մը, 20. Ոմն, 5. պ. Ս. Ա. նանեսանց, 3. պ. Գրպեան, 3. Ուսանող մը, 1.50. Խումբ մը Հայեր, 2,30. Տ., 5. Մ., 10. Խումբ մը Հայեր, 11. Տիկին մը, 20. Յ. եւ Ա., 10. Ռ. Մ., 50. Կ. Փ., 20. Մ.Ս., 20. պ. պ. Մելիք-Մինասեան եղբարք, 20. Ոմն, 10. Ոմն, 20. Անվերսի ազգայինք, 100. Լեւոն, 5. պ. Ն. Ներսէսեան (Ամերիկա), 5,15. պ. Թորոս Լալէեան (Պուլկարեայ), 5. Իտալիայէն՝ Խումբ մը Հայեր, 31. Տիկին մը, 40. աղքատ ծերունի մը, 3. Իղձ, 1 : — Համագումար, 834,95 :

«Լ'Արմէնի» ի վերջին թիւէն հաճոյքով կ'իմանանք թէ պ. Չերազ այլեւայլ անձերէ ընդունած է՝ նոյն նպատակին համար՝ 1175,75 : Ուրեմն այս վայրկեանիս Փարիզի մէջ ընդամէնը կայ հաւաքուած՝ 2010,70 Փր :

Հանգանակութիւնը կը շարունակուի : Ամերիկայի «Չայն Հայրենեաց» ն ալ բացած է միեւնոյն նպատակով հանգանակութիւն մը, որ՝ վստահ ենք՝ Միացեալ Նահանգաց խանդավառ ու ազնիւ Հայութեան կողմէ պիտի դանկ այն ընդունելութիւնը որուն արժանի է : Կիպրոսի մէջ սարքուած երեկոյթը տեղի ունեցեր է, ինչպէս կ'իմանանք մեր թղթակցէն, եւ զուտ հասոյթ է թողեր քսան ոսկի :

Այն պահուն իսկ ուր «Անահիտ» ի մէջ ի նպատակով Չէյթունի որբերուն մեր կոչն հրատարակեցինք, միեւնոյն ասեմ զիմում ըրինք Փասթէօրեան հաստատութեան գեր-տնօրէն Տր. Ռուին, պատմելով Չէյթունի եւ շրջակայից մէջ ծաղկախտի համաճարակին գործած աւերները, եւ խնդրելով որ պատուաւ «զրկելու

միջոցներուն» մէջ հաճի մեզ օգնել . մեծահոգի գիտունը յանձն առաւ ոչ միայն ամենաապահով միջոցներով հասցնել պատուաստը Չէյթուն, այլ եւ խոստացաւ ինքն իսկ հայթայթել հարկաւոր եղած քանակութեամբ պատուաստը Չէյթունի եւ շրջակայից բնակչութեան համար՝ առանց կրօնքի եւ ցեղի խտրութեան : Այս մարդասիրական որոշումը խորապէս յուզեց Փարիզի Հայերը, ու Տ. Վստմապուհ քանանան ու թաղական խորհուրդի ատենակետը նամակով մը Փարիզի հայ գաղութին երախտագիտութիւնը յայտնեցին պ. Ռուին :

Այս լուրը կը հաղորդենք հասարակութեան, նկատելով որ կարգ մը թերթեր հանգանակութեան միակ նպատակը ծաղկախտին առաջքը աննելը կը համարին եւ կը յայտարարեն թէ արդէն իսկ հաւաքուած գրամները պիտի փութացնեն զրկել՝ այդ նպատակին յատկացնելու համար : Ծաղկախտի հարցը կարգադրուած կարելի է նկատել : Հաւաքուած գրամները պէտք յատկացուին Չէյթունի «որբերուն ապրուստն ու կրթութիւնն ապահովելու» : Եւ ասանելով այն ազնիւ ընթացքը զոր օտարազգի անձնաւորութիւն մը ցոյց կուտայ, կը յուսանք որ մեր ազգայինները կրկնապատիկ եռանդով պիտի ջանան այս հանդանակութիւնը փայլուն յաջողութեամբ մը պսակելու :

Այս առիթով, չենք կրնար մեր զգուանքը չյայտնել այն լղբունկ յողուածին համար որով վիենտոկի Միմուր «Մշակի» ն մէջ «կը յայտարարէ եւ կը ծաղրէ» ի նպատակով Չէյթունի որբերուն ու հիւանդներուն մեր բացած այս հանգանակութիւնը . . .

Միմուր կը գրէ թէ «Անահիտ»ը, լ'«Արմէնի»ին հետ մրցման ելլելու համար է որ այդ նպատակով հանգանակութիւն է բացեր . աւի սուտ է . մենք «Փիւնիկ» ի հրատարակութեանն ներշնչուած՝ այդ գաղափարն ունեցանք, եւ ուրոյն յաւելուածով մը տպեցինք մեր կոչը՝ աւելի ուշադրութիւն հրաւիրելու համար . մեր այդ կոչը տպուած էր արդէն՝ երբ «Լ'Արմէնի»ն հրապարակ ելաւ : Մենք շատ դոն եղանք տեսնելով որ «Լ'Արմէնի»ն ալ նոյն գաղափարն ունեցեր էր : Այսպիսի հանգիւթիւն մը բանալրաւ փառքի տիտղոս մը չենք համարիր, այլ տարրական պարտականութեան մը կատարումը . մեր միակ փափաքն այն է որ հանգանակու-

Թիւնը յաջող արդիւնքի մը յանդիւր . այդ կը բաւէ մեզի . արժանիքը , փառքը , պարծանքը — եթէ կայ — ուրիշին թող ըլլայ : Բայց այս չէ այդ յօգուածին բուն պօզալի կողմը : Յօգուածագիրը կը պնդէ թէ բնաւ պէտք չկայ եղեր Ձէյթունի մէջ դպրոց բանալու , պէտք չէ եղեր Ձէյթունցիները « բարակցնել » , եւն : եւն : Ո՞վ բաւ որ մենք Ձէյթունի մէջ « համալսարան » բանալ առաջարկեցինք : Ձէյթունի որբերը անօթի են , մէջտեղը մնացած են , պատասպարուելու տեղ մը չունին . հիւանդ են , ու հիւանդանոց չունին . այս ցաւալի կացութիւնը պարմանելու համար կոչուած ըրինք հասարակութեան . մեր փափաքն այն էր որ Ձէյթունի որբերը ունենան ապաստանարան մը ուր միանգամայն նախնական քիչ շատ կանոնաւոր կրթութիւն մը ստանան , —ինչ որ վնասակար բան մը չէ վերջապէս՝ ու եւ է տեսակէտով : Ուզեցինք նաեւ որ ծաղկախտին դարման տարուի , եւ ատոր համար ըրինք ինչ որ կրնայինք : Հիմա կ'ուզենք — « Ձէյթունցի » ինչ հետ , որ փոքրիկ հիւանդանոց մըն ալ հաստատուի հոն . եւ եթէ բաւական լուրջ գումարի մը յանգի հանդանակութիւնը , այդ հիմնարկութեան պջակցողներ պիտի ունենանք Ծրանսայի գիտական շրջանակներէն : Այս պատճառով առաջարկեցինք գումարները տեղ մը կեդրոնացնել եւ ամենը մէկանց զըրկել կամ Պոլսոյ պատրիարքին , կամ Կիլիկիոյ կաթողիկոսին , որպէս զի յատկացուին՝ առանց ցրուելու՝ այդ որոշ երկու նպատակներուն , կամ գոնէ անոնցմէ մէկ հասին՝ եթէ գումարն անբաւական ըլլայ : Փոխանակ հրատարակելու զգուելի յօգուած մը , ուր վենետիկի Միմոսը , Թումանեանը պաշտպանելէ յետոյ՝ « այս պիտի ազնիւ ու լուրջ նպատակով » բացուած հանգանակութեան մը դէմ քար կը նետէ , « Մըշակ » ըլլէ իրօք հաւատարիմ մնացած ըլլար իր հիմնադրին ոգւոյն , պէտք էր որ արձագանգ տար մեր կոչին եւ աջակցէր այս հանգանակութեան :

Միթիւնկեմ ու Միւլանի մէջ . Ապրիլ 26ի իրիկունը տեղի ունեցած է մեծ միթիւնկ մը ի նպաստ հայկական եւ մակեդոնական դատերուն . խօսած են կարգ մը իտալացի անձնաւորութիւններ , ինչպէս եւ պ . Փիէր Գիլիար , որ մասնաւորապէս հրաւիրուած էր : Հոռմի մէջ ալ նմանօրինակ միթիւնկ մը տեղի աւնեցած է , ուր խօսած են պպ . Անաթոլ Ծրանս , Փրոֆ . Սերճի , Տէլ Պալցօ երեսփոխանը եւ կոմս

Անճելօ տը կուպերնաթիւս , որ Chants populaires arméniens հատորին ներածութիւնէն ներշնչուելով Հայոց պատմական դերը պարզած եւ քանի մը ժողովրդական երգերու իտալական թարգմանութիւնը կարգաւոր ուղած է հայ ցեղին հոգեբանութեան վրայ դադափար մը ալ : — Այս միթիւնկերուն նախաձեռնարկը եւ կազմակերպողը եղած է Տր . Լորիս Միլիքեան ըստ որ . « Փրօ Արմէնիայ » ի կազմակերպիչն էր նաեւ Փարիզ գումարուած Շաթօ տ'օի մեծ միթիւնկին :

Պ . ՄԱՆԹԱՇԵԱՆ . Թիֆլիսի լրագրիւնը էն կ'իմանանք թէ պ . Մանթաշեան որոշած է երկու միլիոն ֆրանքէն աւելի գումար մը նուիրել՝ Թիֆլիսի մէջ բազմարուեստեան վարժարան մը հիմնելու համար :

Պ . ԱՐԱՄԵԱՆԾ . — Կովկասեան մամուլը կը հազորդէ դարձեալ թէ պ . Միքայէլ Արամեանց նուիրած է 100,000 ռուբլի՝ Թիֆլիսի մէջ հիւանդանոց մը հիմնելու համար :

ՄԱՆՏԻԷԼԵԱՆ . — Փասթէօրեան Հաստատութիւնը մասնաւոր պաշտօն մը յանձնած է Նուանդ Մանուէլեանին՝ Տր Ռուի աշխատանոցին մէջ : Ծարուակելով հանդերձ այնտեղ իր անձնական հետախուզութիւնները , Մանուէլեան սկսած է Հաստատութեան ծանօթ գիտունեան միոյն Տր . Մորաքսի՝ հետաշխատակցութեամբ , տեսողական գործարանին վերաբերող այլ եւ այլ խնդրոններու վրայ շարք մը ուսումնասիրութիւններ , որոնց մէկ քանին հրատարակուեցան արդէն :

— Պ . ՅՈՎՍԷՓԵԱՆ . — Նիւ-Նորքէն մեզի կը հաղորդեն թէ Տրապիզոնցի հայ երիտասարդ մը , պ . Յովսէֆ Յովսէփեան , որ քաղաքին դերասանական վարժարանին կ'աշակերտէ տալիէ մը ի վեր , առաջին քննութիւնը անցուցեր է շատ ֆայլուն կերպով , եւ ներկայացման մը մասնակցելով՝ իր ամերիկացի ընկերներէն աւելի ջերմ ընդունելութիւն է գտեր :

— « Հայ գրականութիւնը Արեւելեան լեզուաց վարժարանին մէջ » . — Այս առաջին տարուան դասերուն մէջ , որոնց վերջինը տեղի ունեցաւ Մայիս 26ի օրը , պ . Զօպանեան խօսեցաւ Պէշիկթաշլեանի եւ Գամառ Գաթիպայի գործին վրայ , ու դաս մըն ալ յատկացուց հայկական ինչ ու նոր տաղաչափութեան :

ՏՊԱՐԱՆ „ԱՆԱՀԻՏ”

22 RUE CLAUZEL, PARIS

Կը տպագրուին, խնամքով եւ մատչելի գներով, հայերէն ու ֆրանսերէն զրքեր : զրքոյկներ, գեղարուեստական հրատարակութիւններ, յայտագրեր, հրաւիրագրեր, այցաքարտեր, ծանուցումներ, եւն, եւն :

«ՏՊԱՐԱՆ ԵՆԷՋԻՏ» պիտի չարունակէ «Մատենադարան Անահիտ»ի շարքը, պիտի սկսէ «գեղարուեստական հրատարակութեանը» նոր շարք մը եւ պիտի չարունակէ նմանապէս «Անահիտի հրատարակութիւններ»ը, որոնց առաջինը «Երանապետ Քուչակի Իրան»ը, մեծ համակրու թեմաք ընդունուելիքաւ հայ հրատարակութեանն :

«Անահիտի հրատարակութեանց ամենէն մօտակայ թիւերը պիտի ըլլան՝

1. ԷՕՄԷՐ ԽԱՅԵԱՄԻ ՔՕՌԵԱԳՆԵՐԸ, Թարգմանութիւն Գ. ՓԱՌՆԱԿԻ
2. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ, ՈՒ ԳՈՐԾԸ, ուսուցիչութիւն ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻ :
3. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ՔԵՐԹՈՒՄՄԵՐՆ ՈՒ ՃԱՌԵՐԸ, (Բ. տպագրութիւն) :
4. ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ ԹԱՏՐԵՐԳՈՒԵՆԻՆԵՐԸ, (Բ. տպագրութիւն) :

Բացուած է բաժանորդագրութիւն Պեշիկթաշլեանի կենսագրութիւնն եւ քերթուածներն ու ճառերը պարունակող երկու հատորներուն համար : Երկու հատորը պիտի արժեն բաժանորդ գրուողներուն համար՝ հինգ ֆրանք, իսկ տպագրութեանն յետոյ՝ վեց ֆրանք : Բաժանորդագրուել ցանկացողներէն կը խնդրենք այժմէն զրկել նշանակուած գումարը (5 ֆրանք), որպէս զի ըստ այնմ որոշենք տպագրութեան օրինակներու թիւը :

Կը խնդրուի «Տպարան Անահիտ»ի գործառնութեանց վերաբերեալ ամէն նամակ զրկել տպարանի հասցէին, իսկ «Անահիտ» ամսաթերթին, «Հրատարակութիւնք Անահիտ»ին եւ եւ «Մատենադարան Անահիտ»ին վերաբերեալ ամէն նամակ զրկել խմբագրութեան մշտական հասցէին :



ՄԱՍՈՂԱՔԻ ԽՆԿԱՐԿՈՒՆԵՐ

ՈՐԲԱՎՍՃԱՌ ՊԱՆՈՒՆԵԼԻՆ

ԵՒ

ԱՊԻՎՍԸ ՍՈՒՋՆՈՐԳԸ

ԳՐԵՑ

ՄԻՍԱԲ ՆԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԲԱՐԻՉ

1903

ԳԻՆ

Թուրքիա՝ 40 փարա

Օսար երկիրներու համար՝ 50 սանթիմ

Այս գրքոյկին վաճառման
զուտ հասոյթը
պիտի յատկացուի Կ. Պոլսոյ
Եօթրու լէի Հայոց հիւանդանոցին :

ԶԷՅԹՈՒՆՑԻ

ԶԷՅԹՈՒՆՆԵՐ ԱՆՅԵԱԼԵՆ

ՆՔ ՆՇՐԿԱՑԵՆ

Բ. ՄԱՍ

ՓԱՐԻՉ

1903

Գին . 2 ֆր . 50 Եւրոպայի համար, 1 բուբլի
Ռուսաստանի համար, կէս տուրար Ամերիկայի
համար :

Գինել փափաքողները կրնան գիմել նաեւ «Անահիտ»ի խմբագրութեան :

ԱՆԱՀԻՏԻ ԲՈՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՅԱՆՆԵՐԸ

Անանիսը 4ր հրատարակուի ախար անգամ մը :
 Բաժանորդացիներն է ստորեկան՝ 10 ֆրանք (Յրանսա) , 12 ֆրանք (ստար երկիրներ) ,
 2 տոյար (Ամերիկա) 5 բուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 5 ֆր. (Յրանսա), 6 ֆր. (ստար երկիրներ), տող. (Ամերիկա), 3 բպլ. (Ռուսիա) :
 ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒԿ Է :
 Չեռացիրները ետ չեն դարձուիր :
 Կ'ընդունուին այդեր :

Նամակ յոգուած եւ բաժանորդացիներն գրելի հեռուեալ հասցէին
 A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE
 PARIS

«ԱՆԱՀԻՏ»Ի ԳՈՐԾՄԱԿԱՆՆԵՐԸ

Թիֆլիս —	Պայոն Գարսեան (Գոտաներեբոյ գրալաճատանոց)
Պաքու —	» Ս. Մ. Ծոցիկեան
Ռուսճուք —	» Նշան Ս. Թորոսեան
Ֆիլիպպի —	» Ա. Տեմիրճիպաշեան
Պուքիէշ —	» Արիս Լաղար
Դաւրիժ —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք —	» Վահան Մողեան
Իսթ Ռուսիոյ բնակիչներն —	» Կ. Մալխասեան
Ռուսիոյ —	» Ա. Յովսէփեան
Չիքաղօ —	» Ա. Քարակալուրեան
Պրսիոն —	» Մրսմ Ասքանալ
Փրովիանս —	» Օ. Տըրեառեան
Լիւն —	» Լիւոն Փափաղեան